


1016

ԼԻՆԻՆՔ

ԱՌՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ

ՄԱՍ ՅԵՐԿՐՈՐԴ



613

3-22

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1927

613
\$-22 ԿՎ Գ. Ն. ՖԱՅԼԿԻՆԵՐ

-22

L h ū h ū φ

ԱՐՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ

ՄԱՍ ՅԵՐԿՐՈՐԴ

(42 Ակարնոյ)

2010

62213 Ch. 2

Պետական Գիտական Խորհրդի Մանկավարժ. Սեկց. կողմէց թույլատրված է Աստիճանի դպրոցների համար

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿՅՈՒԹՅՈՒՆ
ՍՈՍԿՎԱ 1927



Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 64098.

I. ՄԱՇԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՉՈՐ ԱՆՀՐԱԺԵՏ Ե ԼՎԱՑՎԵԼ.

Մաքուր մաշկը վողորկ (հարթ) ե և փայլուն:
Սրբեցե՛ք ձեր յերեսը պապիրոսի թղթով: Դուք կտես-
նեք, վոր թուղթը կճարպոտվի: Դա գոյանում ե նրա-
նից, վոր մաշկը արտադրում ե, այսպես ասած, մաշկի
ճարպ: Այդ ճարպի շնորհիվ մաշկը պահպանվում ե
չորանալուց: Քամու և թողի ժամանակ աշխատելիս
մաշկը ցամաքվում ե և ճաքվում: Այդ գեպքում մաշկի
վրա հարկավոր ե քսել վորեւ ճարպ:

Ով ուշուշ ե լվացվում, նրա մաշկը քոր ե գա-
լիս: Դրա պատճառն այն ե, վոր մաշկի արտադրած
քրտինքն ու ճարպը ցամաքելով՝ գրգռում են մաշկը:
Զլվացած քրտինքն ու մաշկի ճարպը նպաստում են
թողի և բակտերիաների (մանրիների) կուտակմանը
մաշկի վրա. այդ կուտակումը ցան և մաշկի այլ հի-
վանդություններ ե առաջացնում: Քորելու և կոկծող
ցանի հետևանքով՝ մաշկը յերկար ժամանակ չի առող-
ջանում:

Այդ պատճառով անհրաժեշտ է մաշկը մաքուր պա-
հել: Իզուր չե, վոր լվացվելուց հետո մենք մեզ ավելի
թարմ և աշխատավոր ենք զգում: Սպիտակեղենի և հա-

գուսաի մեջ նույնպես հավաքվում են մաշկի արտադրանքները։ Այդ իսկ պատճառով շաբաթական մի անգամից վոչ պակաս հարկավոր ե սպիտակեղենը փոխել, իսկ հագուստը լվանալ, հողմահարել, թափտալ և մաքրել։ Հարկավոր ե մանկությունից սովորել մարմնի մաքրության և դրան ուշադիր վերաբերվել։ Առանց մաքրության վոչ առողջություն կա, վոչ ել գեղեցկություն։ Առողջությունն ու գեղեցկությունը և կեղտն ու անմաքրությունը իրար չեն գալիս։

Հաճա՞յի յես լվանում մարմինդ։

Քեզանից քըսեի նոտ չի՞ գալիս։

Վ.ո՞րսեղ յես մարդում զգեստ։

Ինչո՞ւ բնակելի ժեներում չի կարելի զգեստ մարել։


Ի՞նչՊԵՍ ՊԱՀԵԼ, ՄԱԶԵՐՆ ՈՒ ՑԵՂՈՒՆԳՆԵՐԸ.

Գլխի մաշկը առանձնապես շատ ճարպ ե արտադրում։ Այդ պատճառով՝ յերբ փոքր յերեխաների գլուխները ուշ-ուշ են լվանում՝ ճարպը ցամաքում ե և կեղեւ կազմում, իսկ անմաքրասեր մարդկանց մազերը կեղտից միմյանց են կպչում և դժվար ելինում սամրել։

Սառը ջրով գլուխը լավ լվանալ անկարելի յե։ Միայն զոլ ջուրը և սապոնն են լուծում և հեռացնում գլխի մաշկի արտադրությունները և նրանց կպած կեղտը։ Գլուխը պետք ե լվանալ շաբաթը յերկու անգամ, իսկ ամենառուշը՝ շաբաթը մեկ անգամ անպայման։ Գլխի մաշկը պահանջում է ուշադիր խնամք, փորովիետեն նրա մեջ են գտնվում մազերի արմատները (նկար 1), կեղտի մեջ կան հատուկ տեսակի

սնկիկներ, վորոնք մազերի հիվանդություններ են առաջացնում։


Մի հիվանդություն կա, վոր կոչվում ե քոստերեխաները հաճախ քոսի սնկիկով վարակվում են շներից և կատուներից։ Այդ սնկիկը քանդում ե մա-



Նկար 1. Մաշկի միջուձիգ կտրվածք՝ աննշան մեծացրած։ Sc—եպիդերմիս, SM—եպիտելիում, Co—միացնող հյուսվածք, N—ներվեր, NP—ներվալին նյարդերի ծայրերը պտուկների մեջ, G—արյունատար անոթներ, GP—նրանց պարույրները պտուկների մեջ, H—մազ, D—ճարպային գեղձ, SD—քրոնքի գեղձեր, SD¹—նրանց ծակերը մաշկի մակերեսությունը, F—մազապատճեն։

գերի արմատները։ Այդ գեղձքում մազերը դուրս են ընկնում։ Քոսի պատճառով կարելի յե քաշալանալ (նկար 2)։ Մի այլ սնկիկ ուրիշ հիվանդություն ե առաջացնում, վոր կոչվում ե ածելող վորքին (նկար 3)։

Նա վոչնչացնում ե մազերը։ Մազերը հատվում
են կարծես թե խուզված շըջակներով։ Ածելող վոր-
քինը շատ վարակիչ հիվանդություն ե։ Դրա պատ-
ճառով դպրոցներում ընդհատում են պարագմունք-
ները։ Իսկ այդ ամենի գլխավոր պատճառն ե անմաք-
րասիրությունը։



Նկ. 2. Գլխի քոս։

Ճառով գլուխը պետք ե լվանալ վոչ թե յեղունգնե-
րով, այլ մատների կակուղ ծայրերով։ Սանրի ատամ-
ները նույնպես չպետք ե սուր լինեն, վորպեսզի գլխի
մաշկը չփրավորվի։ Զափազանց տաք ջուրը նույնպես
վասակար ե, վորովհետև այրում ե գլխի մաշկի դեռ
ևս կենսունակ բջիջները։ Գլխի մաշկի մի հիվանդու-
թյուն ել կա, վորի ժամանակ գլխի թե փ ե յերե-
քում։ Այդ թեփը ալյուրի նման ծածկում ե մար-

Գլուխ լվանալիս հար-
կավոր ե զգույշ լինել։
Լվացվելիս՝ մենք մեր
մաշկից հեռացնում ենք
մեռած բջիջների շեր-
տերը։ Դուք յերեի գի-
տեք, վոր վոտնատակի
վրա մեռուկ և հաստացած
մաշկ կա։ Այդ մաշկը մենք
առանց ցավի յենք դուրս
կտրում։ Բայց գլխի մաշկի
վրա այդ մեռուկ շերտը
բարակ ե, իսկ նրա տակից
բջիջներ։ Այդ պատճա-
ճառով գլուխը պետք ե լվանալ վոչ թե յեղունգնե-
րով, այլ մատների կակուղ ծայրերով։ Սանրի ատամ-
ները նույնպես չպետք ե սուր լինեն, վորպեսզի գլխի
մաշկը չփրավորվի։ Զափազանց տաք ջուրը նույնպես
վասակար ե, վորովհետև այրում ե գլխի մաշկի դեռ
ևս կենսունակ բջիջները։ Գլխի մաշկի մի հիվանդու-
թյուն ել կա, վորի ժամանակ գլխի թե փ ե յերե-
քում։ Այդ թեփը ալյուրի նման ծածկում ե մար-

կու մազերն ու զգեստը։ Այդ հիվանդությունը բժշ-
կելու համար հարկավոր ե գլուխը լվանալ ծծմբա-
ձյութային սպեղանիյով, բայց բժշկի թույլտվու-
թյամբ։ Հարկավոր ե ուշադրությամբ հետեւել, վոր
մազերի մեջ կոջիւներ չերեան։ Բաղնիքից հետո
հարկավոր ե խիտ սանրով մազերը սանրել։ Մազերի
վրա հաճախ նկատվում են բաց գույնի կետեր։ Դը-
րանք վոջիկի ձվիկներն են—անիծներ (4 նկար)։ Նրանց
վոչնչացնելը բավա-
կանին դժվար ե։
Սակայն ով մազեր
սանր ելու համբե-
րություն չունի, նա
անիծները չեն կարող
վոչնչացնել, նա վոջ-
լութ կմնա։ Վոջու-
տությունը բըժըշկ-
վում ե նավթային
յուղով և մի դեղով,
վոր կոչվում սարա-
դիլա։

3-րդ նկար։ Ածելող վորքին։

Գլխարկը, լաչակը չպետք ե չափազանց սեղմեն
գլուխը։ Զե՞ վոր մաշկի բջիջները, ինչպես և
մեր մարմինի բոլոր բջիջները, շնչում են, և այդ պատ-
ճառով չպետք ե դժվարացնել նրանց շնչառությունը։
Նրանք՝ ինչպես կենդանի արարածներ՝ լույսի և ողի
կարիք են զգում։ Դրա համար ել տաք յեղանակին
ոգտավետ ե գլուխը չծածկած թողնել, յեթե ողում
թող չկա։

Յեղունգներն ևս հարկավոր ե մաքուր պահել:
 Կեղտուոտ աշխատանքից հետո պետք ե յեղունգները
 լվանալ սապոնով և խոզանակով, վոր յեղունգների
 տակ կեղտ չմնա: Մաքուր յեղունգները և մազերը
 միանգամից ցույց են տալիս, վոր մարդ մաքրասեր
 ե: Զեռքերի յեղունգները հարկավոր ե կտրել աղեղ-
 նաձե՝ մատի ձկին համապատասխան, բայց վոչ ու-
 ղիդ. պետք ե կտրել վոչ շատ և վոչ ել քիչ (նկ. 5):
 Չե՞ վոր յեղունգը մատի կակուղ մասի պաշտպանն
 ու պահապանն ե և նրա հենարանը
 առարկաներ բռնելիս: Իսկ մատի կակուղ
 ծայրերը մեր ուրիշ աչքերն են: Մատ-
 ների այդ մասերով մենք շոշափում
 ենք մեզ շրջապատող առարկաները:

Յեղունգների մոտ հաճախ լինում են
 քիմներ: Նրանց չպետք ե պոկել
 կամ կծել, վոր դրանից վերքեր չգոյա-
 նան: Վերքի միջոցով կարող են ներս
 մտնել բակտերիաներ և թարախում առա-
 ջացնել: Ամեն մի փոքր վերքի միջոցով
 բակտերիաները կարող են արյան մեջ
 մտնել և արյունի վարակում առաջացնել:
 Թերվածքներն և վերքերը հարկավոր ե քսել յոդի
 թուրմով: Նա կաշին պնդացնում ե, դաբաղում ե այն
 և դրանով պահպանում ե վարակումից:

Ընտրեցնք ձեր դպրոցի աշակերտներից առող-
 ջապահության բջիջ, այդ բջիջը կարճ կոչեցեք՝ առ-
 քիջ: Բջիջը պետք ե հետևի, վորպեսզի դպրոցը և
 աշակերտները մաքուր լինեն:

Ձեր այդ առքջիջում հարց հարուցեք այն մա-
 սին, վոր նա բժշկի հետ միասին բոլոր աշակերտ-
 ների գլխի մազերը, մարմնի մաշկը և
 յեղունգները քննի: Դրանից հետո առ-
 քիջը պետք ե միջոցներ մշակի, վո-
 րոնց չնորհիվ աշակերտի մարմննը և
 դպրոցը կարելի լիներ մաքուր պահել:
 Առքիջը իր աշխատանքի հետևանքի
 մասին պետք ե տեղեկություն տա աշա-
 5-րդ նկար, Կա-
 կերտների ընդհանուր ժողովին:
 յեղունգ:



Ի՞նչՊիՍի ԶՐՈՎ ՊԵՏՔ Ե ԼՎԱՑՎԵԼ.

«Յես սառը ջրով եմ լվացվում»: — «Իսկ յես՝ գոլ
 ջրով, վորովիետև վախենում եմ մըսելուց»: — «Դու
 մըսկան ես, վորովիետև գոլ ջրով ես լվացվում»: —
 «Ինչպես թե»: — «Շատ պարզ ե: Գոլ ջրով լվացվե-
 լուց հետո մաշկը հեշտությամբ պաղում ե: Իսկ յեթե
 դու լվացվես պաղ ջրով, դրանից հետո մարմնդ կոշտ
 կամ թափու սրբիչով շփես, մինչեւ վոր կարմրի, այն
 ժամանակ այնպես կտաքանաս, վոր այլես չես մըսի:
 Դրանով դու արյանդ շարժումը ավելի յես արագա-
 ցնում՝ ինչպես մարմնամարզության ժամանակ: Ով
 վոր գոլ ջրով ե լվացվում — նա թարմ ողում միշտ
 մըսում ե: Միևնույն ժամանակ՝ թեպետ և պաղ ջրից
 սկզբից ցուրտ ես զգում, սակայն դրանից հետո շատ
 շուտ ես տաքանում և կաշիդ ամբողջապես վարդա-
 գույն ե դառնում: Գոլ ջրից հետո դու մըսում ես,
 յեթե անդամ թեթև քամի յե փչում, և սախլված ես

փաթաթվել, իսկ ով շատ ե փաթաթվում՝ նա հաճախ
ե խարբուխով հիվանդանում»: — «Բայց դու կեղտոտ
ես, վորովհետև պաղ ջրով լավ լվացվել անկարելի
յե»: — «Սխալ ես, շաբաթը մի անգամ յես ել եմ
լվացվում դոլ ջրով և սապոնով, իսկ ամեն որ մինչև
դուիս պաղ ջրով յեմ լվացվում»:

Այսպես եյին վիճում յերկու տղա:

Ասացե՛ք, ո՞վ ե նրանցից իրավացի յեվ ինչո՞ւ:

ԳԵՏԻ ԹԵՎ ԾՈՎԻ ՄԵԶ ԼՈՂԱՆՑԱՐԻ ՄԱՍԻՆ.

«Ինչպե՞ս մըսում եմ, անգամ դողում եմ»: —
«Ինչպե՞ս յեղավ, վոր մըսեցիր»: — «Յես գետի մեջ
լողացա»: — «Այ քեզ բան: Բայց չէ՞ վոր մեր դպրոցի
բժիշկը մեզ բացատրեց, վոր այդչափ յերկար լողա-
նալը վնասակար ե: Դու նկատե՞լ ես արդյոք, վոր
յերբ ջուրն ես մտնում և սուզվում, առաջին վայր-
կյան ցուրտ ես զգում. այնուհետև՝ յերբ ջրի մեջ
շարժումներ ես անում և լող տալիս՝ տաքանում ես:
Մաշկդ վարդագույն ե դառնում: Ջրից հարկավոր ե
դուրս գալ, նախ քան նորից կմըսես և կկապտես:
Հակառակ դեպքում լողանալուց վոչ միայն ոգուտ
չես ստանա, այլ կիսասվես:

Լողանալուց առաջ լավ ե ափի մոտ տկլոր պառ-
կել և արեի տակ տաքանալ: Իսկ լողանալուց հետո
հարկավոր ե անմիջապես հագնվել: Շատ վնասակար
ե ջրից դուրս գալ, արեի տակ տաքանալ և նորից
լողանալ՝ ինչպես վոր անում են շատերը»: — «Դու
միայն կը կնում ես՝ վնաս ե, վնաս: Ապա մի բացա-

տրիք՝ թե ինչո՞ւ»: — «Կփորձեմ բացատրել: Ահա այս-
պես յես հասկացա բժշկի ասածը: Ամեն մի աշխա-
տանքից հետո՝ այդ աշխատանքը կատարող որդան-
ները հանգստության պահանջ են զգում: Նույն են
զգում և մեր անոթները (այսինքն՝ ջղերը, վորոնց
մեջ արյուն ե հոսում): Մաշկի անոթները պաղ ջրից
առաջին րոպեյին նեղանում են: Արյունը անցնում ե
ներքին որդանների մեջ: Դրանից հետո անոթները
նորից լայնանում են և արյունը հոսում է դեպի մաշ-
կը, այդ ժամանակ մարդ տաքանում ե: Յեվ այդ բա-
վական ե: Յեթե դու ջրի մեջ յերկար մնաս, մաշկի
անոթները դարձյալ կնեղանան և դու նորից կմրսես,
բայց այս անգամ ավել ժամանակով, վորովհետեւ
անոթները հոգնել են. դու յերկար ժամանակ ցուրտ
կզաքաս: Մարմնի այդ տեսակի սառչելը զանազան հի-
վանդությունների պատճառ ե հանդիսանում: Առհա-
սարակ վոչ ամենքը՝ կարող են լողանալ՝ մանավանդ
ծովում, կան այնպիսի հիվանդություններ, վորոնց
ունենալու դեպքում ծովում լողանալը կարող ե վնաս
բերել: Դրա մասին հարկավոր ե առաջուց բժշկին
հարցնել»:

Պատմիր, դու լողացե՞լ ես զետի մեջ, յերկա՞ր ելիր
ջրում գտնվում յեվ յերկար լողանալուց հետո մրսե՞լ ես
այնպես, ինչպես պատմած ե հոդվածում:

Ի՞նչՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱԳՆՎԵԼ.

Մեղանում մեծ մասամբ բամբակյա սպիտակե-
ղեն են գործածում, իսկ Արևմուտքում՝ տրիկոտաժի:
Տրիկոտաժը ավելի ծակոտիներ ունի: Իսկ վորչափ

շատ են կտորեղենի ծակոտիները, այնչափ կտորները
լավ են խոնավություն ծծում և այդպիսով չորանում:
Իզուր չե, վոր սպորտսմենները*), վորոնք թեթև են
հագնվում, մարմնի վրա ունեն տրիկո կամ մարմնի
ցանց: Սպորտի ժամանակ, որինակ, վազքի ժամանակ
նրանք շատ տաքանում են և այդ դեպքում քրտնում:
Հանգստանալիս, յերբ նրանք պաղում են, չեն զգում,
վոր քրտինքը հոսում ե նրանց մարմնի վրա, վորով-
հետև տրիկոն ծծել ե քրտինքը: Յերբ թեթև քամի
յե փշում, նրանք չեն մըսում, վորովհետև տրիկոն
շուտ ե ցամաքում: Յերբ մարդ վազում ե բամբակյա-
շապիկ հագին, շապիկը յերկար ժամանակ թաց ե
մնում. այդ պատճառով ցուրտ ե զգացվում: Խսկ յեթե
տաքացած և քրտնած մարդը շուտ ե մըսում, նա կա-
րող ե հիվանդանալ: Տրիկոտաֆ հագնող մարդը իրան
շրջապատող ջերմության փոփոխություններից չի
վախենում:

Մանկությունից հարկավոր ե սովորություն ու-
նենալ տաք չհագնվելու: Վոտները հարկավոր ե լավ
հագնել: Նրանք, վորոնց վոտները քրտնում են, ցուրտ
ժամանակ պետք ե բրդե գուլպաներ հագնեն, վորով-
հետև բուրդը ծծում ե քրտինքը և վոտները պակաս
են մըսում: Յերեսն ու վիզը փաթթաթել հարկավոր
չի, վորպեսզի յերեխաները առողջ և դիմացկուն մար-
դիկ դառնան: Շատ փասսակար ե հագնել չափազանց
նեղ զգեստներ: Նեղ զգեստը խանգարում ե մեր շար-
ժումները, խանգարում ե շնչառությունը և արյունի

*) Այն մարդիկ, վորոնք սպորտով, մարմնամարզությամբ են զբաղ-
վում:

շարժումը: Մխալ ե կարծել, վոր նեղ զգեստը մեղ
ավելի տաք ե պահում: Աղատ զգեստը մեղ ավելի
լավ ե տաքացնում, վորովհետև նրա և մեր մարմնի
միջև մեր մարմնի շնորհիվ տաքացած ոդի շերտ ե
լինում: Վոչ թե զգեստն ե մեղ տաքացնում, այլ
մենք ենք տաքացնում մեր զգեստը: Զգեստը միայն
արգելք ե մեր սառչելուն:

Ի՞նչ տեսակի կտորից ե կարած են սպիտակեղենը:
Ի՞նչ տեսակ թելերից են գործած են զուլպաները: Վո՞ր
նազուսն ե տրիկոյից պատրաստված: Վեցրու յերկու հա-
վասար մեծուրյան կտոր՝ տրիկոտաֆի յել բամբակի: Իջե-
ցրու այդ կտորները յերկու հավասար հանուկություն ջուր
ունեցող բաժակի մեջ: Միջելնույն ժամանակաբնաց-
քում այդ կտորները պահիր ջրի մեջ: Բաժակներում մեա-
ցած ջրի հանակուրյան հիման վրա վրուեիր թե վո՞ր
կտորն ե ավելի լավ ջուր ծծում:

ՄՐՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

«Դուք ձեր սենյակը ողափոխում եք», հարց-
նում ե դպրոցի բժիշկը: — «Զե՞ վոր այժմս ձմեռ ե,
յեթե ողանցքը բաց անենք՝ կմըսենք»: — «Վո՞չ, — պա-
տասխանում ե բժիշկը, — մարդիկ հիվանդանում են վոչ
թե մըսելուց, այլ բակտերիաներից: Բայց նրանք
մարդկանց վրա տարբեր ազդեցություն ունեն. ով
դիմացկուն ե, նա չի հիվանդանում. ով վոր ման-
կությունից իրեն թարմ ոդին և պաղ ջրին չի սովո-
րեցրել, նրա մարմինը հեշտությամբ ե սառչում,
մըսում. արյունը դանդաղ ե շարժվում: Այդպիսի
թույլ մարդուն բակտերիաները հեշտությամբ են

հաղթում։ Իդուր չե, վոր շատերը վախենում են միշանցուկ քամուց։ Իսկ մենք սովոր ենք միջանցուկ քամուն և չենք մրսում։ Դա յե պատճառը, վոր մենք շատ հազիվ ենք խարբուխ ունենում։ Ով վոր շատ փաթաթվում և լուսամուտները փակ ե պահում, նա միշտ ասում ե. «Ցես դարձյալ մրսեցի»։ Մրսելուց հիվանդանում ե նա, ով շուտ ե մրսում։ Իսկ շուտ ե մրսում այն մարդը, վոր չի կարողացել իր մարմինը դիմացկուն դարձնել և զարգացնել իր արյան շրջանառությունը։

Դու շո՞ւ ես մրսում։


Դու լվացվո՞ւմ ես ամեն որ գոլ կամ պաղ ջրով։

Լվացվիր պաղ ջրով յեվ դրանից նետ մարմինդ սրբիր չոր արքիչով, մինչեվ վոր մարմինդ կարմրի. այդ որը դու տաք կլինես։ Ստուգիր։ Հարցու բժեկից ավելի մանրամասն, թե ինչպես այդ անել։

II. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐ.


ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎՍՊՈՐՏԸ—ԱՌՈՂՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾ Ե.

Քաղաքի յերեխաները հաճախ ավելի թույլ են գյուղի յերեխաներից։ Գյուղի յերեխաները փոքր հասկից ստիպված են լինում ոգնել տնեցիներին վոչ




6-րդ նկար։ Վաղը

միայն տանը, այլև դաշտում։ Այդ աշխատանքի ժամանակ նրանք վարժեցնում և ամրացնում են իրենց մկանները և շատ յերկար են թարմ ողում գտնը-վում (6—12 նկարներ)։ Սակայն քաղաքներում ևս կան տարբեր յերե-խաներ։



7-ըդ նկարու կողալը:

Խմբակին։ Կարո՞ն չի սիրում վազել։ Նա ավելի գրքեր ե կարդում։ Սաքո՞ն կարոյից շատ առաջ անցավ։ Կարո՞ն սկսեց դժվարությամբ չնչել, ավելի դանդաղ վազել և վերջապես կանդ առավ։ Սաքո՞ն դեռ յերկար եր վազում, իսկ յերբ կանդ առավ՝ նկատելի յեր, վոր նա շատ ել չի հոգնել։



8-րդ նկարը՝ Թիավարությունն
որությունը, վարժությունն-
նույն աշխատանքը կատա-
րախսելով։ Այդ պատճառով

աշխատանքը (այս դեպքում վագբը՝ այսինքն՝ նույնապես մկանների աշխատանք) ավելի շուտ, ուժգին ե առաջընթանում: Ֆարբիկայում աշխատելիս՝ բանվորը ամեն որ միևնույն շարժումներն ե կատարում: Այդ պատճառով նրա մկաններից մի քանիսը ավելի լավ



9-ըդ նկար։ Գնդակ խաղալ։

են զարգացած, իսկ մյուսները՝ վատ: Ֆիզկուլտուրը վարժեցնում ե մարդու բոլոր մկանները և ուղղում ե մարմնի այլանդակությունը, վոր կարող ե գոյանալ միատեսակ աշխատանքից, շարունակ միենույն դրության մեջ գտնվելիս: Միատեսակ աշխատանքը մեզ հոգնեցընում և ձանձրացնում ե: Ասդուրպ ստիպում ե, վեր

մեր բոլոր մկանները աշխատեն, նրանց դարձնում են ճկուն և ուժեղ: Մենք ուզում ենք, վոր մեր մկանները պողպատի նման լինեն և ճկուն, վորպես ձգալար: Մենք ուզում ենք առողջ, վայելչակազմ և գեղեցիկ լինել: Նետի պես մենք գետը կանցնենք լու-



10-րդ նկար: Զմշկախաղ:

ղալով: Թուչնի պես արագ կվագենք: Մեր մկանների միջոցով մենք բարձր և լայն կղարձնենք մեր կրծքի վանդակը: Խորը ոդ կշնչենք: Կարմիր արյունը տաք ալիքի պես կվանա մեր մարմինը:

Ձեր դպրոցում զբաղվո՞ւմ են մարմնամարզությամբ յեվ սպորտով: Նաբարական հանի անզամ: Քանի ուսու-

անընդհատ: Փոխվե՞լ են քո մկանները այն որից, յերդու սկսեցիր զբաղվել մարմնամարզությամբ յեվ սպորտով: Դարձե՞լ են դու ավելի ուժեղ: Յերե ձեր դպրոցում մարմնամարզություն՝ ու սպորտ չկա, այն դեպքում ձեր առջջիջում այդ մասին հարց հարուցեք, դրա մասին խոսեցեք դպրոցի բժեկի նետ:

ՏԱՐ ՎԵՐԱՐԿՈՒԻՒ ՓՈԽԱՐԵՆ—ՅԻՉԿՈՒԼՏՈՒՐ.

Յերբ մենք փայտ ենք կտրում կամ արագ վազգում՝ շողում ենք: Մեզ տաքացնող ջերմը արտադրում ե մեր մարմինը: Այդ պատճառով աշխատանքի ժամանակ մենք տաքություն ենք զգում և անդամ այն ժամանակ, յերբ մենք ցրտում ենք աշխատում: Վառելիքը վառարանում այրվելիս միանում ե ողիթթվածնի հետ. այդ դեպքում գոյանում ե ածխա-



11-րդ նկար: Լըժեր:

թթու: Նույնն ե լինում և մեր մարմնի մեջ. Նրա բջիջներում վառելիքի պաշարները—վերամշակված սրնունդը—այրվում են առանց կրակի. այդ դեպքում նրանք միանում են թթվածնի հետ, վոր բերվում ե արյան միջոցով: Այրվելուց գոյացած ածխաթթուն դուրս ե գնում: Աշխատանքի ժամանակ մենք ավելի ուժեղ ենք այրվում, շնչում ենք ավելի հաճախ և խորը. մենք ներս ենք շնչում ավելի թթվածին և արտաշնչում շատ ածխաթթու: Ինչպես շոգեկառքի վառարանում արտադրվող ջերմությունը մասամբ տա-

քացնում եր շոգեկառքը, մասամբ ել գնացքի շարժում
առաջացնող աշխատանք եր դառնում, այնպես ել մեր
մարմնի մեջ այրման ժամանակ դոյցացող ջերմությունը
մասամբ մեզ տաքացնում եր, մասամբ ել մեր մարմնի
աշխատանք եր դառնում:



12-րդ նկար:

Մարմնամարզություն։ մեզ շրջապատող ողի մեջն
և անցնում։ Յեթե մենք կարողանայինք հավաքել
որվա ընթացքում մեր արտադրած չերմությունը,
մենք կկարողանայինք յերկու դուրս յեռգնել։

Այդ պատճառով՝ յերբ մենք մըսում ենք՝ պետք
ե բանենք կամ Փիզկուլտուրով զբաղվենք։ Տաք վե-
րարկուն, մուշտակը ջերմություն են պահպանում։
Մեր ջերմությունը պահպանելու համար, փոխանակ
փաթաթվելու, մենք կուժեղացնենք մեր մարմնի ջեր-
մության արտադրողականությունը Փիզկուլտուրի մի-
ջոցով և կտաքանանք։

Դու հանա՞ի յես մրտում: Փորձե՞լ ես դու փաքար-
վելու փոխարեն Ֆիզիկապես աշխատել կամ մարմնամար-
զուրյամբ զբաղվել: Փորձիր յեկ պատմիր, թե դու տաքա-
ցա՞ր դրանից:

Ցեղը մեզ շրջապատող
ողը ավելի սառն ե, քան
մեր մարմինը, վերջինս
հանգստանալով աստիճա-
նաբար սառչում ե և ստա-
նում ե իր մշտական տեմ-
պերատուրը (ջերմու-
թյունը), իսկ աշխատան-
քի ժամանակ գոյացած

ՃԵՐՄՈՒԹՅԱՆ ավելորդը
մեզ շրջապատող ողի մեջն

Հավաքել


տաղբած չերսությունը,
և դույլ ջուր յեռցնել:

Ա. ԱՎԵԱՑԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԳԵՂՋԱԽՏԻ ՄԱՍԻՆ.

Դուք ամենքդ տեսած եք հաստ, ուռած վզով
յերեխաներ։ Վզի ուռուցքը առաջացնում են մեծա-
ցած գեղձերը (այսինքն՝ ավշային գեղձերը)։ Նրանք
դժոնվում են աճուկներում, արմունկի և կռնատակի
փոսերում, նրանք շրջապատում են ցնցուղները, նրանք
շատ են և փորում։ Վզի գեղձերի մեծանալը ամենից
շատ ե աչքի ընկնում։ Սակայն գեղձերը մեծանում
են վոչ միանգամից, այլ աստիճանաբար։ Ակզրից
նրանց մեծանալը աննկատելի յե։ Իսկ յերբ մայրը
նկատում ե, վոր յերեխայի վիզը ուռել ե, տատերը
և ազգականները մորը համոզում են, վոր դա վտան-
գավոր չի, վոր դա հասարակ գեղձախտ ե, և յերե-
խայի մայրը հանգստանալով, յերեխային բժիշկի մոտ
չի տանում։ Իսկ այդ ուռած գեղձերը շատ հաճախ
հիվանդության սկիզբն են լինում, վորովհետեւ հի-
վանդությունը գեղձերից կարող ե անցնել վոսկոր-
ների և թոքերի վրա։ Այդ հիվանդության անունն ե
տուբերկուլյոզ (բարակացավ)։ Յերեխան սողում ե
հայտակի վրա, ձեռք ե տալիս բոլոր իբրերին. թաթիկ-
ների վրա վարակ ե մնում, վոր դիպչում ե շթունք-

ներին, անցնում ե բերանը և ծծվում գեղձերի մեջ: Յերեխան ծանր ող ե շնչում, խմում ե հիվանդ կովի կաթը: Վարակը անցնում ե նրա մարմնի մեջ և մնում գեղձերում: Հիվանդ մայրը համբուրում ե յերեխայի զրժունքները, կամ պառկեցնում ե նրան իր անկող-



13-րդ նկար: Գեղձախտոս յերեխա:

նում: Մոր շունչը կպչում ե յերեխայի յերեսին և նրա խորխի՝ աչքի համար աննկատելի շատ մանր կաթիների հետ յերեխան ներս ե շնչում տուբերկուլոզի բակտերիաները: Բակտերիաները տուաջացնում են գեղձերի մեծանալը, բորբոքումը, նրանց թարա-

խացումը: Թարախը կարող ե գուրս գալ, գոյանում են խոցեր և ֆիստուլներ (խուղակներ): Բայց և առանց թարախման, գեղձերի մեծանալը մարմնի զանազան մասերում կարող ե տեել տարիներ շարունակ, մինչև վոր յերեխան մեծանա: Յերբ նա պատահի յեղառնում, յերբ նա ավելի մեծ ուժի, առողջության կարիք ունի չափահաս դառնալու համար, նրա մեջ յերկում են թոքախտի նշաններ: Յերբ բժիշկը հարցնում ե, թե յերիտասարդը կամ աղջիկը առաջ ինչ հիվանդություն ե ունեցել, մայրը զարմանալով ասում ե, վոր հիվանդ չի յեղել, իսկ գեղձախտ, ճիշտ ե, յեղել ե: Ահա հենց այդ գեղձախտը թողնել չի կարելի. պետք ե ժամանակին բժշկել:


Պատմեցեք ձեր մորը, թե ի՞նչ զիսեք գեղձախտի մասին:

IV. ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆԸ.

Ի՞նչ ե ՌԱԽԻՏԸ.

Ամառը փողոցներում կամ այգիներում շատ անգամ կարելի յե տեսնել ծուռ վոտիկներ ունեցող մանուկներին, Յերեխաներից մի քանիսի վոտիկները ծովել են օ տառի նման, իսկ մյուսներինը՝ չ նման։ Այդ տեսակ յերեխաների գանգի վոսկորները յերկար ժամանակ իրար չեն միանում։ Յերբ առողջ յերեխաների գանգի վոսկորները վաղուց արդեն միացած են, այդ մանուկների գլխին կարելի յե գանգի չվոսկացած մասեր շոշափել (նկար 14)։ Նրանց ատամները ուշ են յերեկում, կրծքի վանդակը կողքերից սեղմակած ե, իսկ կրծոսկը (կրծքի մեջտեղի վոսկորը) դուրս ե ցցված։ Նրանց փորը մեծ ե։ Այդ յերեխաները իրենց ծուռ վոտիկներով յերերալով են ման գալիս։ Նրանք ուշ են սկսում ման գալ։ Այդ բոլորի պատճառը այն է, վոր նրանց վոսկորների մեջ քիչ կիր կա։ Այդ հանգամանքը խանգարում է վոսկորների իր ժամանակին ամրանալուն։ Վոսկորները դեռ ևս կակուղ են մնում այն ժամանակ, յերբ յերեխան արդեն սկսում է ման գալ։ Վոտիկների կակուղ վոսկոր-

ները չեն կարող պահել մարմնի ծանրությունը և ծովում են։ Այն հիվանդությունը, վորի ժամանակ վոսկորների մեջ կիրի պակասություն կա՝ կոչվում ե ուսիսիտ կամ անգլիական հիվանդություն։ Ռախիտը զարգանում է այն յերեխաների մարմնում, վորոնք ավելի ուժ է ունենալու մասին մասում կամ ներքնահարկերում։ Նրանք քիչ են լինում թարմ ողում և



14-րդ նկար։ Ռախիտավոր յերեխաներ։

արկի ճառագայթների տակ։ Ընդարձակ բնակարաններում մեծացած յերեխաները, այնտեղ, վորտեղ շատ լույս կա, ուսիսիտով քիչ են հիվանդանում։ Իզուր չե, վոր ուսիսիտը պըոլետարական հիվանդություն է կոչվում։ Ռախիտով հիվանդ յերեխաները մնվել են վոչ թե մոր կաթով, այլ կովի ջրախառն կաթով։ Մայրերը, աղքատության կամ տղիտության պատճա-

ոռվ, միայն հացով կամ՝ խյուսով են նրանց կերակրել, մինչդեռ յերեխաները կաթի, այլ վոչ հացի կարիք եյին զգում, Այդ յերեխաները ժամանակից առաջ սկսել են կարտոֆիլ ուտել, և այդիսկ պատճառով նրանց փորը մեծ է: Ռախիտով հիվանդ յերեխաների ուռած փորը գերմանացիք կոչում են «կարտոֆիլի փոր»: Յերեխայի մարմինը իր կյանքի առաջն տարվա ընթացքում լավ սնվող, առողջ մոր կաթի պահանջ ե զգում: Մոր կաթի մեջ կա այն բոլորը, ինչ վոր հարկավոր ե մանուկի մարմինի զարգացման համար նրա կյանքի առաջին տարվա ընթացքում, Առաջին տարվա վերջերին յերեխային պետք ե տռու և այլ սնունդ: Նրան պետք ե կերակրել բանջարեղենով և մրգերով և կովի կաթ խմացնել: Յերեխաներին մսով կերակրել հարկավոր չի, մինչեւ վոր նրանք յերեք-չորս տարեկան դառնան: Բացի կանոնավոր սննդից՝ յերեխաները մաքուր ողի, լավ հողմահարված սենյակի և մաքուր անկողնի կարիք ունեն:

Քո յեվ քո կրտսեր յեղբօր վոտերը ուղի՞ղ են:
Լա՞վ ե հոդմահարվում ձեր բնակարանը:
Մորդ կարո՞վ ես սնվել դու թե՞ վոչ:

ԻՆՉՈՐԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՈՍԿՈՐՆԵՐԸ ՇԱՏ ՃԿՈՒՆ են,
ԻՍԿ ԾԵՐԵՐԻՆԾԻ ԿՈՏՐՑՎՈՂ.

Դուք ունե՞ք նոր ծնված յեղբայր կամ քույր: Նրա վոսկորները կակուղ են: Յեթե դուք ձեր մատներով ձեռ տաք (զգույշ) նրա գլուխը՝ կնկատեք, վոր

գլուխն ել կակուղ ե: Կակուղ վոսկորները շատ ձկուն են: Իսկ պառավերը մրթմրթում են, վոր նրանց վոտները ձկուն չեն: Ծերերն ընկնելիս՝ հեշտությամբ կոտրում են իրենց հնացած, փիսրուն վոսկորները: Իսկ դուք, յերեխայր, շուտ-շուտ եք ընկնում, բայց յեղե՞լ են դեպքեր, վոր ձեղանից մեկը իր վոտքը կոտրեր: Յեթե անգամ այդ պատահում ե, դա շատ հազվագյուտ ե լինում:

Իսկ այդ բոլորը նրանից ե, վոր յերեխաների վոսկորները բավականաչափ դեռ «վոսկրացած» չեն: Նրանք մասամբ բաղկացած են կրծիկից, մասամբ ել կակուղ թերթիկներից, վոր իրենց մեջ կիր դեռ չեն ծծել. կիրն ե, վոր վոսկորներն ամրացնում, վոսկորները մեր հենարանն ե դարձնում: Իսկ ծերության հասակում՝ ընդհակառակը: Վոսկորների մեջ քիչ կա այն նյութից, վորի շնորհիվ վոսկորները կակուղ են և ձկուն, բայց շատ կիր կա, վորի պատճառով նրանք պինդ են և փիսրուն: Ահա ինչու յերեխաների վոսկորները ձկուն են և չեն կոտրվում: Վորչափ մարդու տարիքը ավելանում ե, այնչափ նրա վոսկորները ամուր են դառնում և փիսրուն, կորցնելով իրենց ձկունությունը:


Կրծիկն ու կրածինը կարելի յե առանձնացնել վոսկորից՝ հետեւյալ փորձերն անելով:

Յեթե դուք վոսկորը վառարան գցեք, կնկատեք, վոր վոսկորն այրվում ե, բայց վոչ ամբողջապես: Այրվում ե վոսկորի կենդանի մասը, կրծկի մեջ գլունվող կրածինը չի ալրվում: Այդ պատճառով կիրկած վոսկորը հեշտությամբ փշրվում ե, դառնալով կրա-

մոխիր: Իսկ յեթե վոսկորն ընկղմել ջրախառն քլորա-
ջրաթթուի կամ քացախի մեջ, նրա մեջ յեղած կիրը
լուծվում ե, կմնա կակուղ և ճկուն կրծիկը:


ՅԵՐԵՆԱՅԻ ԱՆԿՈՂԻՆԸ ՊԵՏՔ Ե ԿՈՇՏ ԼԻՆԻ, ՄԻՆՉԵՎ
ՎՈՐ ՆՐԱ ՎՈՂՆՍՇԱՐԸ ՊՆԴԱՆԱ.

Ահա փոքրիկ յերեխան պառկած ե փափուկ ան-
կողնի վրա. նրա գլուխը բարձի վրա յե: Մարմինը



15-րդ նկ. Յերեխայի վողնաշարը կոշտ և կակուղ անկողնի վրա:
հենվում է ներքնակին: Բայց ներքնակը չամրացած
վոսկորների համար հենարան ծառայել չի կարող, վո-
րովինեւու վողնաշարը ծռվում ե: Այդ յերեխայի կող-
քին նկարված ե կոշտ ներքնակի վրա պառկած յերե-

խայի ուղիղ և ձիգ վողնաշարը, կոշտ անկողինը
պաշտպանում ե յերեխայի վողնաշարը ծռվելուց,
յերեխային ծառայելով վորպես հենարան: Ամուր
անկողինը վողնաշարի հիվանդության ժամանակ դեղի
նշանակություն ունի: Տուբերկուլյոզի ժամանակ
Քոխի ցուպիկները, այսինքն՝ տուբերկուլյոզի բակ-
տերիաները, վողնաշարի մեջն են մտնում և նրա վոս-
կորների մեջ բորբոքում են առաջացնում: Վոսկորի
մեջ կարող ե խոց առաջանալ, վոր քայքայում ե
առողջ վոսկորը:



16-րդ նկար: Կուպիկ (սապատավոր):

Վողները իրար պահում են: Նրանցից յուրա-
քանչյուրը հենվում է ստորին վողնի վրա և պահում
է վերեինը: Բոլորը միասին ծառայում են վորպես
մարդու մարմնի հենարան: Հիվանդ, քայքայվող վողնը
հենարան լինել չի կարող: Այդ պատճառով վողնա-
շարը ուղիղ չի մնում, այլ ծռվում է (նկ. 16): Վոր-
քան շատ վողներ են հիվանդությամբ բռնված, այն-

քան ծուռն ե մեջքը, Յերեխան կուզիկ ե դառնում: Յեթե հիվանդության սկզբին բժիշկը վորոշում ե, թե ինչով ե հիվանդ յերեխան, այն ժամանակ յերեխային պառկեցնում են կոշտ անկողնի վրա, առանց բարձի, թարմ ողում, կամ նրան պառկեցնում են, այսպես ասած գաջային անկողնի վրա: Այդ դեպքում վողնաշարը հանդստանում ե: Նրանցից վոչ մեկը չի հենվում մյուսի վրա: Ճնշումից ազատ վողների մեջ հիվանդության ընթացքը դանդաղում ե, միենույն ժամանակ գաջը վողնաշարի համար լավ հենարան ե, վորոշիետև նա չի ծովում, ինչպես փափուկ անկողնի վրա: Միաժամանակ յերեխային տրվում ե լավ սնունդ: Նրա մարմինը ամրանում ե սննդի և թարմ ողի շնորհիվ և հաղթում ե հիվանդությանը: Յերեխան ազատվում ե կուզիկ դառնալուց:

Յո փոքրիկ յեղբայրները կամ բույրերը արդյօն փետուրե (բմբուլե) ներենակի յեվ կամ բարձերի վրա՝ չեն բնում: Արա այնպես, վոր նրանց անկողինը առողջարար լինի:


ԿՐԾՔԻ ԾԽՎԱԾ ՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Նայեցեք առաջին աշակերտին (նկար 17): Նրա մեջքը ծովել ե գեպի աջ: Այն սեղանը, վորի առաջ նա նստած ե և դրում ե, չափազանց բարձր ե: Այդ պատճառով նա ստիպված ե չափազանց բարձրացնել իր աջ արմունկը, վոր շատ անհարմար ե: Արմունկի հետեւից քաշվում ե նրա ուսը, իսկ ուսը քաշում ե և մեջքը: Արմունկը և ուսը ստիպեցին, վոր մեջքը թեքվի դեպի աջ: Նրա վողնաշարը դեռ լիովին


վոսկրացած չի. Նա հեշտությամբ ծռվում է: Տղան ծուռ կողքերով կմեծանաւ:

Այժմ նայեցեք յերկրորդ աշակերտին (նկար 18). Նա նստած ե չափազանց ցածր սեղանի առաջ: Գրելիս նա ստիպված ե առաջ կռանալ: Նա կմեծանա կորացած:

Դպրոցական տարիների ընթացքում ծռակող կամ կորացած չդառնալու համար հարկավոր ե նստել այն-



17-րդ նկ. Սկոլիոզ:



18-րդ նկ. Կորություն:

պիսի բարձրության նստարանի վրա, վոր վոտքերը հենվեն հատակին: Իսկ սեղանի բարձրությունը պետք ե հավասար լինի (ուղիղ, այլ վոչ ծուռ նստած) աշակերտի արմունկի բարձրությանը:

Տետրակը հարկավոր ե գնել սեղանի վրա այնպես, վոր նրա անկյունագիծը սեղանի յեզրերի հետ միասին կազմի ուղիղ անկյուն:

Նոր նստարաններ ամեն տեղ չի կարելի շինել: Մարմնամարզությունն ու սպորտը ամենալավ դեղերն

Են դպրոցում անկանոն նստելու հետևանքների դեմ՝ Նրանք ստիպում են, վոր բոլոր մկանները բանեն, և դրանով ուղղում են անկանոն նստելուց յեղած թերությունները:

Վարժեցրեք ձեզ մարմնամարդության: Այն ժամանակ կմեծանաք վայելչակազմ, ուղիղ վողնաշարով:

Ստուգեցե՛ք, թե արդյոք հենվո՞ւմ են ձեր վատերը հասակին, յերք դուք ուղիղ եք նստած ձեր սեղանի բարձրությանը հավասար ե ձեր արմունկների բարձրությանը:

Դիտեցե՛ք ձեր դասարանի բնեկերներին, կա՞ն արդյոք նրանց մեջ ծուռ կողեւով կամ կորացած յերեխաներ: Քանի՞սն են: Դրանք բանի տոկոս են կազմում:


**ԻՆՉՈՐԻ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ ԼԱՎ ԵՆ ՄԱՆ ԳԱԼԻՍ
ԻՍԿ ՄՅՈՒԽԵՐԸ Վ.Ա.Ը.**

Վերջին եքսկուրսիայի ժամանակ ո՞վ եր հետ մնում: Ձեզնից ո՞վ ե վատ քայլում (յեթե հիվանդ կամ թույլ չե), կարելի յե եքսկուրսիա գնացած չլինել, բայց և այնպես վորոշել, թե ով եր հետ մնում:

Այդ կարելի յե անել այսպես: Կանգնեցե՛ք թաց և բորիկ վոտքով չոր հատակի վրա: Կարելի յե և ուրիշ կերպ: Վառարանի մուըր քսեցեք մի թերթ թղթի վրա և բորիկ վոտով վրան կանգնեցեք: Հատակի կամ թղթի վրա մնացած նկարներից կարելի յե իմանալ, թե ո՞վ ե վատ ման դալիս: Ում վոտի նկարը նման է կոշկակարի ձևած նրբանին, նա վատ եքսկուրսանոտ ե: Իսկ այն մարդը, վորի վոտի միայն մատներն ու կրունկը կնկարվեն (19 նկար), այլ վոչ թե վոտի մեջտեղի մասը, լավ քայլող ե: Դուք տես-

նում եք, վոր մենք հենվում ենք վոտի վոչ ամբողջ մակերեսի վրա, այլ վոտքի կամարի ծայրերի վրա:

Մարդու վոտը բաղկացած ե քսանինն առանձին վոսկորից: Նրանց միջև կան կրծիկի շերտեր: Յերբ մենք հենվում ենք վոտի կամարի յերեք կետի վրա, մեր վոտը ուսուորի դեր ե խաղում: Քայլելիս, վազելիս կամ թոփչք անելիս, ցնցումները մարմնի ծանրությունից բոլոր վոսկորներին չեն հաղորդվում: Ահա թե ինչու թոփչք անելիս, հարկավոր ե առաջ ընկնել մատների վրա և ապա ամբողջ վոտի վրա կանգնել:




19-րդ նկար: Տափակ և նորմալ վոտքերի հետքեր,

Այն մարդը, վորի վոտի կամարը ուռուցիկ ե, հեշտությամբ ե քայլում: Նա քայլելուց չի հոգնում: Իսկ այդպիսի կամար չունեցողը, այսինքն՝ում վոտը տափակ ե, նա ծանը ե քայլում և շուտ հոգնում: Տափակ վոտը կարելի յե ուղղել կամ հատուկ կոշիկների կամ ոպերացիայի միջոցով (նկար 20):

Անգործ մարդիկ հաճախ հնարում են կոշիկների նոր ձևեր: Նրանք կարծում են, վոր նեղ կոշիկի մեջ

սղմված ու այլանդակված վոտը գեղեցիկ եւ նեղ կոշկի ծայրում մատները չեն տեղափորվում, իրար սխմում են: Դրանից գոյանում են կոշտեր: Բարձր կրունկը այլանդակում ե վոտի կամարը: Բարձր կրունկ ունեցող մարդու վոտները շուտ են հոգնում, վորովհետև անկանոն կերպով են հենվում: Բարձր կրունկներով եքսկուրսիա գնալ չի կարելի:



20-րդ նկար: Տափակ և նորմալ վոտ:

Որինակ չառնեք այդպիսի վնասակար հնարքներից: Մեր գեղեցկությունը մեր առողջությունն ե, վայելչակազմությունը և մեր շարժումների ազատությունը: Թող կորչեն նեղ կոշկածայրերն ու բարձր կրունկները:

Զեր դպրոցում կա՞ն այնպիսի առակերտութիւներ, վորոնիք բարձրակրունկ կոչիկներ են հազնում:

Նրանք կարո՞ղ են այնպես բայլել ու վագել, ինչպես տղաները:

V. ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ԱՊՊԱՐԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՉՈՐԻ ՑԵՆՔ ՈԴԱՓՈԽՈՒՄ ՄԵՐ ՍԵՆՅԱԿԸ.

Բժիշկն ասում ե. «Հաճախ բաց արեք ձեր պատուհանները, վորքան կարելի յե շատ յեղեք թարմ ողում»: Դա նշանակում ե, վոր չողափոխված սենյակում ողը մաքուր չի:

Յերբ թարմ ողին սովոր մարդը մտնում ե չողափոխված սենյակ, անշարժ, ծանր ողով սենյակ, նա միանգամից զգում ե վատ հոտ. դրա պատճառներն են մշտական թողը և յերեխաների սպիտակեղեննը, կեղտոտ և քրտնքոտ զգեստը, վառարանի կամ կերակրի հոտը: Մարդու գլուխը պտույտ ե գալիս, աչքերը մթնում են և մարդ իրեն վատ ե զգում:

Փակ շենքում ողը փչացնող պատճառներից մեկն ել մեր շնչառությունն ե:

Ողը գազերի խառնուրդ եւ Մեր շնչառության, մեր կյանքի համար անհրաժեշտ գազը կոչվում ե թթվածին: Ողի մեջ կա և ածխաթթուի աննշան խառնուրդ: Յեթե ողի հագար մասի մեջ ածխաթթուի մի մաս կա, ողը արդեն փչացած ե և շնչառության համար վնասակար: Մեր շնչած ողի հարյուր մասի մեջ կա մոտ 21 մաս թթվածին: Մեր ար-

տաշնչած ողի հարյուր մասի մեջ կա միմիայն 16 մաս թթվածին։ Իսկ արտաշնչած ողի մեջ ածխաթթուի քանակությունը չորս մասից ավելի յե։ Վորքան շատ մարդ կա սենյակում, այնքան արագ ե ավելանում ածխաթթուի, ջրի գոլորշու քանակությունը և այնքան շուտ ե ողը շնչառության համար անպետք դառնում։

Յեթե մենք չմաքրելինք այն շենքի ողը, վորի մեջ մենք գտնվում ենք, վերջիվերջո մենք կմեղդ վեյինք։ Այդ պատճառով մենք բաց ենք անում պատռհանը և սենյակի ողը մաքրում ենք։

Յերկրագնդի վրա ապրում ե մոտ յերկու միլի-արդ մարդ։ Բացի մարդկանցից, յերկրագնդի վրա կան շատ կենդանիներ և բույսեր։ Բոլորն ել շնչում են. շնչելիս, նրանք արտադրում են ածխաթթվային գազ և ներս են շնչում թթվածին։ Չնայած դրան, յերկրագունդը շըջապատող ողում կամ, ինչպես այլ կերպ են ասում, ատմոսֆերի (մթնոլորտի) մեջ թթվածնի և ածխաթթուի քանակը չի փոխվում։

Ի՞նչն ե դրա պատճառը։ Գիտնականները վաղուց կարողացել են ապացուցել, վոր բույսերի կանաչ մասերը արևի լույսի ազդեցության տակ ածխաթթվային գազով են սնվում և թթվածին են արտադրում. այսինքն՝ նրանց մեջ նկատվում ե մի պրոցես, վորն հակառակ ե կենդանիների շնչառության ժամանակ կատարվող պրոցեսին։ Այսպես ուրեմն, կանաչ բույսերը մաքրում են ողը։


Այժմ հասկանալի յե, թե ինչու քաղաքներում, մանավանդ այնպիսի քաղաքներում, վորտեղ ապրում

են տասնյակ և հարյուր հազարավոր մարդիկ, վորտեղ կան շատ ֆաբրիկաներ, գործարաններ, այնտեղ այգիներ, զբոսավայրեր և ծառուղիներ են սարքվում։ Դու ք սենյակի ողը մաերո՞ւմ ես։ Որեկան բանի՞ անգամ։

ԿՐԾՔԻ ՎԱՆԴԱԿԻ ՄԱՍԻՆ.


Հանվեցե՛ք և նայեցեք ձեր կրծքի վանդակին։ Յերեխաներից մի քանիսի կրծքի վանդակը նեղ ե և տափակ։

Յեթե մենք կողքից նայենք տափակ կուրծք ունեցողներին, կնկատենք, վոր կրծքի և մեջքի



21-րդ նկար։ Տափակ և նորմալ կրծքի վանդակ։

միջև յեղած տարածությունը փոքր ե։ Թիակները չեն կպչում մեջքին (ցույց տվեք կմախքի նկարի վրա, գտեք ձեր և ընկերների մեջքի վրա), այլ հեռու յեն մնում, կարծես թերել լինեն։ Առջևից՝ ան-



22-րդ նկար: Մարդու կմախը.

1. Վզի վերջին գողնը.
2. Կրծքի վերջին գողնը.
3. Գոտկային վերջին գողնը.
4. Սրբանուկը և պոչուկ.
5. Կողուկրեր.
6. Կրծքի վոսկոր.
7. Թիակ.
8. Անրակ.
9. Բաղկոսկը.
10. Ճաճանչոսկը.
11. Ծղոսկը.
12. Ցենթրադատակ.
13. Նախադատակ.
14. Մատներ.

րակների վերևը փոսիկներ են նկատվում: (Կրծքի մեջտեղը կա մի վոսկոր, վոր կոչվում է կրծոսկը, նրանից դեպի ուսերը տարածվում են անրակները): Ցերեխաներից մի քանիսի կուրծքը լայն է և բարձըր, այսինքն կրծքի և մեջքի միջև յեղած տարածությունը մեծ է: Անրակների վերևը փոսիկներ չկան: Թիակները մեջքից հեռու չեն: Տափակ կուրծքը ունեցողների նեղ վանդակում թոքերը քիչ ող ունեն: Զափեցեք սանտիմետրով կրծքի վանդակի շրջագիծը ներշնչելու և արտաշնչելու ժամանակ: Առջեցից սանտիմետրը հարկավոր է պահել պտուկների վրա, իսկ յետեկից՝ թիակների տակ: Զափելիս ձեր ընկերոջը ստիպեցեք, վոր նախ ող ներշնչի և հետո նույն ուժով արտաշնչի: Կազմեցեք ձեր դասարանի աշակերտների կրծքի վանդակի շրջագծի ցուցակը: Ով լավ ենչում, նրա կրծքի վանդակի շրջագծի տարրերությունը ներշնչելու և արտաշնչելու ժամանակ ավելի մեծ է, քան վատ շնչողինը: Տափակ կուրծքը ունեցողների թոքերում քիչ ող կա, և ողափոխությունը վատ է. ներշնչելու ժամանակ քիչ թթվածին և մըտնում, իսկ արտաշնչելու ժամանակ ածխաթթուն բավականաչափ դուրս չի գալիս:


Կմախիք նկարի վրա, ձեր յել ընկերների վրա ցույց տվեք, թե վո՞րտեղ են կողոսկրերը, անրակները, կրծոսկը, Քանի՞ զույգ կողոսկը ունի մարդը:

Ի՞նչո՞ւ ՈՒՂՂԵԼ ԿՐԾՔԻ ՎԱՆԴԱԿԻ ՏԱՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Նայեցե՛ք այս յերեխաներին: Նրանք շնչական մարմամարզություն են անում: Դրա համար հար-

կավոր ե ուղիղ կանգնել՝ կուրծքը առաջ պահել, իսկ ուսերը՝ հետ։ Այնուհետև ձեռքերը բարձրացնել վերեվ, յերկու կողմ պարզել և հետ տանել։ Հետո ուսերը բարձրացնել և, վերջապես մարմինը ծռել։

Այդ շարժումների յուրաքանչյուրի ընթացքում հարկավոր ե խորը ող ներշնչել, դանդաղ բարձրանալով վոտների մատների ծայրերի վրա, և ապա խորը արտաշնչել՝ իջնելով կրնկների վրա։



23-րդ նկար։ Շնչական մարմնամարզություն։

Յերբ Փարիզի դպրոցներից մեկում այդ տեսակի շնչական մարմնամարզություն մտցրվեց՝ յերեխաների կրծքի շրջադիմը 2-ից մինչև 6 սանտիմետրի հասավ։ Այդ մարմնամարզությունը հարկավոր ե անել դասամիջոցների ժամանակ, ավելի լավ ե՝ թարմ ողում, ամեն անգամ 3 րոպե։ Յեթե դուք շնչական մարմնամարզություն անեք սենյակում՝ բաց արեք անպատճառ պատուհանը։ Սենյակում շատ թող կա, և, բացի այդ, քանի յերկար են մարդիկ մնում փակ սենյա-

կում, այնքան շատանում ե ածխաթթուի քանակը սենյակում։ Թող և ածխաթթու ուժգնորեն ներշնչել՝ դա նշանակում է մասսել մարդու մարմինը։ Շնչական մարմնամարզությունը վարժեցնում ե շնչական մկանները, լայնացնում ե կրծքի վանդակը, սովորեցնում ե խորը շնչել։ Մկանների մարզանքը խանգարում ե այն մասսակար հետևանքների զարգացմանը, վորոնք առաջանում են մի տեղ յերկար նստելուց։

Խոսեցեք ձեր դպրոցի բժեկի նետ, թե ի՞նչպես պետք է կատարել շնչական մարմնամարզությունը։

ԹՈՔԱԽՏԻ ՄԱՍԻՆ. ԽՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ, ՆՐԱՆԻՑ.

Թոքախտը — դա թոքերի հիվանդություն ե, վոր շատ հաճախ ենք տեսնում։ Մարդու թոքը բաղկացած ե բազմաթիվ պղպջակներից (26 նկար), վորոնք պրջապատված են ամենաբարակ արյունատար անոթների ցանցով։

Պղպջակները գտնվում են չափազանց բարակ հյուսվածքի մեջ։ Պղպջակների և անոթների բարակ պատերից, թթվածինը, վոր հասնում ե այստեղ շընչափողի ցնցուղներով, անցնում ե արյան մեջ, իսկ ածխաթթուն արյան միջից անցնում ե պղպջակների մեջ և այստեղից ցնցուղների մեջ։ Ահա թե ինչու արտաշնչված ողի մեջ թթվածինը պակասում ե, իսկ ածխաթթուն ավելանում։

Թոքախտից շատ մարդիկ են մեռնում դեռ յերիտասարդ հասակում։ Տուբերկուլյոզի բակտերիաները, մտնելով թոքերի մեջ, հաստատվում են այստեղ և բորբոքված ուռուցքներ են առաջ բերում։ Սրանք

կոչվում են խիլ։ Վորքան շատ խիլ կա թոքերում, այնքան քիչ ող կլինի այնտեղ։ Յեթե հիվանդության վրա ուշադրություն չեն դարձնում, խիլերը քայքայվում են և գոյանում են խոցեր։





24-րդ նկար։ Թոքախտավոր յերեխան։ Քիչ են մեռնում։ Ամենից շատ թոքախտից մեռնում են քարտաշները։ Նրանց թոքերի մեջ շատ հանքային փոշի

յե մտնում, վոր կեղտուառում և վիրավորում ե թոքերի պղպջակները։

Բացատրեցեք ձեր մայրերին, թե վորքան վիասակար և հատակը չորխողանակովկամ ավելով մաքրելը, վորովհետև փոշի յե բարձրանում։ Հողացեք, վոր դասարանում թքամոնն լինի, վոր վոք չթքի հատակին։ Հազարու ժամանակ փակեցեք բերաներդ, վորպեսզի մոտ կանդնողները ողի հետ միասին ներս չնչեն խուխի փոքրիկ մասնիկները, վոր դուրս ե ցայտում հազի ժամանակ։ Այդ խուխի մասնիկների մեջ կարող են բակտերիաներ լինել և


առաջ բերել թոքերի հիմունքություն։ Զեր սենյակը և դասարանը լավ լլութերի պղպջակներ։ Առ—շնչարկի առողջությունը թոքերի պղպջակի շուրջը։

Թաց բեռ չոր շորով ըի միջոցով արյունը անցնում է պղպջակի մեջ։ Վայն անոթը, վորի վեցնում։ Վորտե՞ղ եք միջոցով արյունը պղպջակից դուրս քում։



ՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻՑ.

Լուծեցե՞ք հետեւյալ խնդիրը. Խորհրդային Միության մեջ յուրաքանչյուր տարի տուբերկուլյոզից մեռնում են վոչ պակաս 500 հազար մարդ: Ցեթե Խորհրդային Միության ազգաբնակչության թիվը 130 միլիոն է, ապա տուբերկուլյոզից մեռնողների թիվը ընդհանուր թվի վո՞ր տոկոսն է կազմում:




27-րդ նկար: Թոքախոտ:

Մի անդամ Փարիզյան դիսպանսերներից մեկը յեկել եր մի աղջիկ: Նրան քննել են և գտել, վոր նա թոքախտով և հիվանդ: Տուբերկուլյոզի դիսպանսերի^{*)} գթության քույր - հետազոտողներից մեկը գնում է այդ աղջկա բնակարանը, վորպեսզի իմանա, թե ի՞նչպես ե նա ապրում և ումի՞ց ե վարակվել:

Պարզվել է, վոր այդ յերեխայի ընտանիքի անդամները բոլորը առողջ են: Բժիշկը տարակուսանքի մեջ ե ընկնում: Ուրեմն ումի՞ց ե վարակվել յերեխան:

^{*)} Տուբերկուլյոզի դիսպանսերը մի հիմարկություն ե՝ տուբերկուլյոզի դեմ կռվելու համար:

Գթության քույրը սկսում է հետաքրքրվել, թե ում մոտ ե լինում յերեխան, ում հետ ե լինում, յերբ նրա ծնողները աշխատանքի յեն գնում: Պարզվեց, վոր յերեխան մնում է մի հարևանունու մոտ, վորը հիվանդ պառկած է: Գթության քրոջ հետազոտումից պարզվում է, վոր այդ կինը հազում և խխում է: Նրա մոտ խաղում են մի քանի յերեխաներ, վորոնց մայրերը աշխատանքի յեն գնում: Այդ հարևանուն



28-րդ նկար: Պառակ և յերեխաներ.

գթության քույրը դիսպանսեր տարավ և բժշկական քննությունը գտավ, վոր նա հիվանդ է թոքախտով: Նրա խուսի մեջ մեծ քանակությամբ Քոխի ցուպիկներ գտան: Իսկ չե՞ վոր հիվանդը տանը թքում եր, ուր պատահի: Ցերեխաները շնչում եյին այն ողով, վորի մեջ բազմաթիվ բակտերիաներ կային: Նրանց մատներին նույնպես կարող եյին շատ բակտերիաներ

կալչել: Մատներից այդ բակտերիաները կարող եյին ընկնել բերանը և այստեղից արյան անոթներով դեպի թոքերը և մյուս գործարանները:

Այժմ զարմանալի չե, վոր այդ աղջիկը վարակվել և հիվանդացել եր:

Թույլ կտա՞մ դուք, վոր հատակին թեն:


Թբաման ունե՞մ քե վոչ:

ԴԻՍՊԱՆՍԵՐԸ ԹՈՒԲԱԽՏԻ ԴԵՄ Ե ՊԱՅՔԱՐՈՒՄ.

Այսոր մենք գնացինք եքսկուրսիա դեպի Առժողկոմատի ցուցադրական դիսպանսերը: Շենքը տեղավորված է պարտիզի մեջ: Պարտիզում խաղում եյին դիսպանսերի մանկական ցերեկային սանատորիայի յերեխաները: Նրանց հետ ուսուցչունի կար: Պարտիզում մենք տեսանք տախտակից շինած յերեք հատ տերրասներ, վորտեղ կային շատ մահճականեր: Տերրասների բաց կողմը ուղղված է դեպի հարավ: Մի տերրասի վրա պառկած են յերեխաները, իսկ մյուսի վրա՝ չափահամները: Զմեռը նրանք դարձյալ դուրմն են պառկած լինում և փաթաթվում են մորթուց կարած պարկերի մեջ: Պարտիզից մենք գնացինք դեպի զլխավոր շենքը: Նախասենյակում վերարկուներս հանեցինք: Սենյակները բարձր են, լույս և մաքուր: Նախասենյակում և հետեւյալ սենյակում, ուր ցուցակագրում են հիվանդներին, շատ նկարներ և դիագրամներ կան: Ընդունելության սպասող հիվանդները դիտում եյին այդ նկարները: Մերթ մեկ, մերթ մյուս դուռը բացվում եր և հիվանդներին ներս եյին հրավիրում բժիշկների մոտ. այստեղ քննում են հիվանդ-

ներին և խորհուրդներ տալիս: Մեղ ցույց տվեցին լաբորատորիան. այստեղ հետազոտում են հիվանդների արյունը, թոքը և մեղը: Բժիշկը ցույց տվեց մեզ թոփի ցուպիկները, վոր նա մանրադիտակով գտել եր հիվանդի թուքի մեջ:

Վիրակապության սենյակում լուսամուտը մի ամբողջ պատ ե բռնում: Պատերը սպիտակ յուղա-



29-րդ նկար: Տերրաս

ներկով են ներկված: Սենյակի մեջտեղում կա մի մեծ սեղան. այդ սեղանի վրա պառկած եր մի տղա և բժիշկը՝ գթության քրոջ հետ միասին, նրա ծընկանը գաջի փաթաթան եյին դնում: Այդ յերեխան ծնկի հողի տուբերկուլյոզ ուներ:

Վիրագործության սենյակում ավելի մաքուր եր և նրա առաստաղն ել ասլակյա յեր, նա ամբողջովին

սպիտակ երև և փայլուն։ Վիրագործության սենյակին կից կար մի սենյակ։ Այստեղ կային լվացարաններ, ապակյա պահարաններ, փայլուն նիկելյա արկղներ, բամբակի և մարլիի համար։ Պահարանների մեջ կային շատ գործիքներ.—զանազան թիակներ, ունելիքներ, մկրատներ, դանակներ։

Ականջի և կոկորդի մասնագետ բժշկի յերեսին կար մի մեծ կլոր հայելի։ Հիվանդի կոկորդի մեջնա




30-րդ նկար։ Լաբորատորիա.

գնում եր փոքրիկ հայելի։ Մեծ հայելիյովնա հավաքում եր լույսի ճառագայթները և գցում եր կոկորդի մեջ, վորպեսզի լավ յերես։ Գթության քույրը մի զագան բերեց և բացեց։ Գոլորշի դուրս յեկավ։ Այդ զագանի մեջ գործիքներ են յեփում։ Յեռացնելը վոչնչացնում ե վարակը և գործիքները դառնում են մաքուր ու անվասու։

Վերեկի հարկում գտնվում են հիվանդների սենյակները։ Մի քանի սենյակներում պառկած են յե-

րեխաները, մյուս սենյակներում՝ չափահասները։ Մենք գնացինք նաև հետազոտող՝ քույրերի սենյակները։ Սրանք գնում են հիվանդների բնակարանները, սովորեցնում են, թե ինչպես պետք է ապրել, վոր առողջ և դիմացկուն լինեն. հետևում են հիվանդների առողջությանը. սովորեցնում են նրանց, թե ինչպես վար-



31-րդ նկար։ Վիրակապության սենյակ։

վել խուխի հետ, վորպեսզի ուրիշները չվարակվեն։ Փնտում և գտնում են այն հիվանդներին, վորոնք դեռ դիսպանսեր չեն յեկել։ Գթության քույրերը համոզում են ընտանիքի բոլոր անդամներին, վոր գնան դիսպանսեր, վորպեսզի պարզեն, թե ումից ե վարակվել հիվանդը և բոլորն ել բժշկվեն։

Դիսպանսերի շրջակայքում գտնվող բոլոր գործարաններից պատգամավորներ են դալիս այնտեղ: Գթության քույրերը հայտնում են, թե ով թքամանի կարիք ունի, ով առանձին մահճկալի, ով սպիտակեղենի և այլն: Այդ «խորհուրդը» կամ պատգամավորների ժողովը նման կարիքավոր հիվանդներին ողնում ե: Բանվորները և ծառայողները իրենց ոռճիկներից դրամ են հատկացնում՝ դիսպանսերի կարիքավոր հիվանդներին ոգնելու նպատակով:

Յերբ մենք դիսպանսերում եյինք, այնտեղ սահատորիական հանձնաժողովի նիստն եր: Բժիշկներն ընտրում եյին այն հիվանդներին, վորոնք առանձնապես կարիք ունեյին սահատորիական բժշկության:

Բայց չե՞ վոր սահատորիայում բոլորին չի կարելի տեղափորել: Այդ պատճառով ել դիսպանսերին կից կա նաև յերեկային հրապարակ: Այստեղ հիվանդները գալիս են կես որով, իսկ որվա մյուս կեսը աշխատում են:

Տուբերկուլյոզը շատ յերկար ե տևում:

Մարդու կաղմվածքը կովում ե նրա դեմ: Յեթե հիվանդի պայմանները լավացնել, նա առողջանում ե: Առանց սահատորիա գնալու յել, յեթե հիվանդը հաճախում ե հրապարակը և լավ ե անվում ու քիչ ե աշխատում, նա առողջանում ե: Յերբ հիվանդը գալիս ե դիսպանսեր, նա լվանում ե մարմինը, լավ սըրբվում, չափում են նրա ջերմությունը, նա նախաճաշում ե և գնում ե պարտեզ՝ տերրասում պառկելու և թարմ ող շնչելու: Պառկելուց հետո ճաշում են: Հիվանդներին միշտ կշռում են, վորպեսզի ստուգեն, վո՞րքան ե ավելացել նրա քաշը:

Գլխավոր շենքից մենք ուղերձեցինք դեպի մանկական յերեկային սանատորիան: Այստեղ գալիս են հիվանդ յերեխաները և անցկացնում իրենց որը: Նախասենյակում մի յերկար կախարան կար—յերեսսրբիչների համար: Յուրաքանչյուր յերեխա իրեն համար յերեսսրբիչ ունի: Նրանց մարմինը լվանում են վաննայի մեջ զով ջրով, սրբվում են և ատամները մաքրում: Յուրաքանչյուր յերեխա ունի իր գավաթը և ատամի խողանակը: Սանատորիայում կան փոքրիկ մանկական սեղաններ, աթոռներ և դաշնամուր: Որքամեծ մասը յերեխաները անց են կացնում պարտիզում: Նրանց առողջությանը հետեւում ե բժիշկը, իսկ պարապում ե նրանց հետ ուսուցչուհին: Բոլոր յերեխաները մաքրուր են և ուրախ:

Յերբ մենք վերադառնում եյինք, տեսանք, վոր դեպի գլխավոր շենքը տանում եյին մոգական լապտերը: Դա բժշկի համար եր, վոր գնում եր բանակումք՝ տուբերկուլյոզի մասին դասախոսություն կարդալու:

Դիսպանսերները յուրաքանչյուր տարի կազմակերպում են տուբերկուլյոզի դեմ պայքարի որ: Այդ որը ամենուրեք դրամ են հավաքում տուբերկուլյոզի դեմ պայքարելու համար, դասախոսություններ են կարդում:

ԶԲՈՍԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ ՅԵԿԱՆԱԿԱՐԸ—ՔԱՂԱՔԻ
ԹՈՒՔԵՐՆ ԵՆ.

Տուբերկուլյոզով հիվանդանում և նրանից մեռնում են մեծ մասամբ այն մարդիկ, վորոնք ապրու-

Են կեղտու և խոնավ բնակարաններում, վորտեղ ողը և լույսը քիչ են, վորտեղ արևի ճառագայթները չեն թափանցում։ Տուբերկուլյոզը բուն և դնում նեղ, փռշոտ փողոցներում, փոքրիկ, կեղտու բակերում, ցածր սենյակներում, վորոնք փոքր լուսամուտներ ունեն և բացի դրանից դիմացից բարձր պատերը արգելում են արևի ճառագայթներին ներս թափանցելու։

Այս յերեխաները, վոր ծնվում և մեծանում են նման բնակարաններում, լինում են գունատե թույլ։ Նրանք հիվանդանում են գլխավորապես տուբերկուլոզով և դժվարությամբ են բժշկվում, իսկ այն յերեխաները, վորոնք ապրում են լույս, մաքուր և արեվոտ բնակարաններում։ Հիվանդանալու դեպքում շուտ են առողջանում։ Արևի լույսը սպանում է տուբերկուլոզի բակտերիաներին։

Այդ պատճառով ել հին քաղաքները իրենց տեղը պետք ե զիջեն նոր քաղաքներին։ Այդ նոր քաղաքները կոչվում են «քաղաք-այգիներ»։ Տներն այնտեղ լինում են վոչ շատ բարձր և չարս կողմը ազատ։ Արևի ճառագայթները ազատ թափանցում են բնակարանի մեջ։ Տներում ջուր կա, կեղտը հողի տակ անցնող խողովակներով գնում և շատ հեռու (կանալիզացիա)։ այնպես վոր այդ տների հողը և ողը չեն կեղտուվում։ Այդ քաղաք-այգիներում շատ զբոսավայրեր և պարտեզներ կան, իսկ փողոցները լայն են և ծառուղի յեն դարձված։

Անգլիայում, Գերմանիայում և Բելգիայում արդեն շինված են նման քաղաքներ։ Այնտեղ այժմ, առաջվա հետ համեմատած, յերկու անգամ պակաս թվով յերեխաներ են մեռնում։

Ինչպես վոր մարդու թոքերը մաքրում են նրա մարմինը, այնպես ել կանաչը նպաստում է ողի մաքրությանը։ Զբոսապարտեզները և այգիները քաղաքի թոքերն են։

ԱՊԱԳՄՆ—ԲԱՑՈՂՅԱՅՍ. ԴՊՐՈՑՆԵՐԻՆ Ե.

Դպրոցներից մեկում ողը յենթարկվեց հետազոտման և պարզվեց, վոր ողի հազար մասին գալիս ե հետևյալ քանակությամբ ածխաթթու՝

Առավոտ, դասից առաջ	1,46 մաս.
Առաջին դասից հետո	3,84 »
Յերկրորդ » »	3,37 »
Մեծ դասամիջոցից հետո, վորի ընթացքում ողանցքը բաց ե յեղել	1,69 »
Յերրորդ դասից հետո	3,71 »
Չորրորդ » »	3,99 »
Հինգյերորդ » »	4,12 »

Ահա թե ինչպես են թունավորվում յերեխաները փակ շենքում։ Զարմանալի չե, վոր յերեխաները կամաց կամաց հոգնում են և իրենց աշխատանքի մեջ ավելի սխալներ են անում։

Ուստաստանում անտառային դպրոցներ շատ քիչ կան, Այնտեղ ուղարկվում են միայն թույլ և հիվանդ յերեխաները։ Ամերիկայում կան դպրոցներ, վորտեղ դասարանները կտուրի վրա կամ տերրասներում են շինված, և չորս պատի փոխարեն յերեք պատունեն։ Ապագայում մեր դպրոցները բացողյա կըլինեն, Այդպիսի դպրոցներում յերեխաները վոչ միայն սովորում են, այլ ամրացնում են իրենց առողջությունը և դպրոցն ավարտելուց հետո նրանք լինում են ավելի առողջ և ավելի պինդ, քան դպրոց մտնելիս։

VI. ԱՐՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՉԻՑՆ Ե, ՎՈՐ ՑԵՐԵԽՆԱՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԹՇԵՐԸ ԳՈՒՆԱՏ
ԵՆ, ԻՄԿ ՄՑՈՒՏՆԵՐԻՆԸ ԿԱՐՄԻՐ.

Դպրոցական բժիշկ մոտ յեկան յերկու յերեխա:
Բժիշկը քննեց նրանց ու ասաց. «Դու, Մանիկ,
շատ գունատ ես, իսկ Վարդուշը շատ լավ ե: Ապա
բերեք յես ձեր արյունը մանրադիտակի տակլ քննեմ»:

Բժիշկը ծակեց նրանց մատի ծայրը, և յուրա-
քանչյուրից մի քանի կաթիլ արյուն վերցրեց ու ասաց,
վոր հետևյալ որը Մանիկն ու Վարդուշը իր մոտ գնան:

Հետևյալ որը բժիշկն հայտնեց, վոր Մանիկը
արյան պակասություն ունի, «Ինչպես անենք, վոր
նրա արյունը շատանա», հարցրեց մտահոգված մայրը,
Բժիշկը ժպտաց և ասաց.— «Նա բավականաչափ
արյուն ունի, բայց նրա արյան կարմիր գնդիկների
թիվը ե պակաս և նրանք դժգույն են. նրանց կար-
միր ներկը պակաս ե»:— «Այդ ինչ գնդիկներ են,
բժիշկ»— հարցրեց Մանիկը:

— «Մեր արյունը,—պատասխանեց բժիշկը,—հե-
ղուկ ե, վորի մեջ լողում են առանձին մարմիններ»:
Նա մոտեցրեց Մանիկին մանրադիտակը և Մանիկը
տեսավ բազմաթիվ կարմիր գնդիկներ, վորոնք նման

եյին մեջտեղը սեղմված կլոր թխվածքի*): — «Ահա
սրանք են կարմիր գնդիկները», — բացատրեց բժիշկը. —
Նրանց մեջ ներկող նյութ կա, վոր կոչվում ե հիմո-
վլորին. ահա սա յե, վոր կարմիր գույն ե տալիս
արյանը: Իսկ այն հեղուկը, վորի մեջ նրանք լողում
են, բայց գեղնագույն ե. նա կոչվում ե պլասմա
(արյունահյութ): Դու դիտես, վոր արյունը հոսում ե
ամբողջ մարմնի մեջ և բոլոր թիջներին կերակուր ե
տանում ու հավաքում ե ամբողջ մարմնի անպետք
նյութերը: Բջիջները շնչում են: Նրանց շնչառության
համար հարկավոր ե թթվածին. այդ թթվածինը նրանք
ստանում են արյունից: Արյունը կլանում ե նաև այն
ածխաթթուն, վոր շնչառության ժամանակ արտա-
դրում են թիջները:

Արյունը, մաքրվելով թոքերի մեջ, գնում ե դեպի
սիրտը և այստեղից հոսում ամբողջ մարմնի մեջ:
Արյունը ալ գույնի յե. իսկ այն արյունը, վոր մարմնի
բոլոր անկյուններից գնում ե դեպի թոքերը՝ մաքր-
վելու համար, ունի մուգ գույն, վոր ստացվել ե
ածխաթթուի խառնուրդից:

Վորքան արյան մեջ շատ կարմիր գնդիկներ կան,
այնքան թիջները լավ են շնչում, այնքան մարգն
առողջ ե: Զափահաս մարդու մեկ խորանադ միւլի-
մետը արյան մեջ կա մոտ 5.000.000 կարմիր գըն-
դիկներ: Իսկ քո արյան մեջ շատ քիչ են և նրանց
մեջ քիչ հիմոգրորին կա. ուրեմն՝ քո արյունը քիչ
թթվածին ե վերցնում: Քո մարմնի մեջ տարածվում

*) Տես. «Լինինք ուժեղ և առողջ» գրքույկի առաջին
մտառում № 46 նկարը:

ե վոչ ալ գույն ունեցող, այլ գունատ արյուն։ Որդանիզմին հարկավոր ե թթվածին, իսկ թթվածնի ցրիչներ քիչ կան։ Առանց թթվածնի՝ մարդու որդանիզմը չի կարող առողջ լինել։ Թարմ ողը և կանոնավոր սնունդը ավելացնում են կարմիր գնդիկների թիվը և հիմոգլոբինի քանակը ու առողջացնում են մեզ։ Այ, քեզ կուղարկենք անտառային դպրոց։ Այնտեղ քո այտերը կկարմըն և դու կառողջանաս»։

Ձեր դպրոցում գունատ առակերտներ շա՞տ կան։
Նրանք վորտե՞ղ են անցկացնում արձակուրդները։

ՍՊԻՏԱԿ ԱՐՅՈՒՆԱԳՆԴԻԿՆԵՐԻ ՄՈՍԻՆ.

Մեկ անգամ Մանիկը մատը կտրեց։ Նա կապեց մատը կեղտոտ շորով։ մատը ուռոց ու սկսեց ցավել։ Նա յեկավ բժշկի մոտ։ Բժիշկը քննեց նրա մատը և հարցցեց.—«Միթե դու մոռացե՞լ ես, վոր կեղտի մեջ բակտերիաներ կան։ Թարմ վերքը վոչ կարելի յել լվանալ և վոչ ել կեղտոտ շորով կապել։ Ամենալավ միջոցն ե՝ անմիջապես յոդ քսելը։ Յոդը քաշում ե կաշին և թույլ չի տալիս, վոր բակտերիաները ներս խորժեն։ Դրանից հետո վերքը պետք ե կապել մաքուր կտորով, իսկ յեթե ձեռքի տակ կա, ավելի լավ ե մաքուր շղարշով, վորից գործածում են հիվանդանոցներում։ Իսկ հիմա տեսնո՞ւմ ես, թարախել ե և դեռ շատ հոգսեր կպատճառի քեզ»։ — «Իսկ վորտե՞ղից հավաքվեց թարախը,» — հարցըց Մանիկը, Բժիշկը պատասխանեց։ — «Մեր արյան մեջ, բացի կարմիր գնդիկներից, կան նաև սպիտակ գնդիկներ, Ահա տես,

թե ինչպես յեն նրանք*), Յերբ վերքիդ մեջ բակտերիաներ ընկան, այդ սպիտակ մարմինները արյան անոթների պատերից դուրս յեկան նրանց դեմ։ Սկսվեց սպայքարը։ Սպիտակ գնդիկները սկսեցին դուրս քաշել իրենց մարմի մասնիկները և ծածկել բակտերիաներին—լափել նրանց։ Բակտերիաները իրենց հերթին սկսեցին թույներ արտադրել։ Այդ թույները թունավորում են սպիտակ մարմիններին և դարձնում նրանց թարախոտ»։ «Ուրեմն բակտերիաները հաղթեցին,» — հարցըց Մանիկը։ — «Չե՛, դեռ սպասիր, — պատասխանեց բժիշկը։ — թարախը վերքի միջից դուրս կգա և յեթե ավելի ուժեղ սպիտակ մարմինները լափեն բակտերիաներին, վերքը կսկսի կամաց-կամաց առողջանալ»։

— «Իսկ ինչպե՞ս եք այդ բոլորը դուք իմացել», — հարցըց Մանիկը։ — «Մեզանից մի քանի տարի առաջ մոռսաստանում ապրում եր մի մեծ գիտնական՝ Մեշնիկով ազգանունով։ Նա մանրադիտակի տակ դիտել եր բակտերիաների և սպիտակ գնդիկների միջև տեղի ունեցած պայքարը և գրի առել։ Ուրիշ գիտնականներ ստուգել են և համոզվել, վոր Մեշնիկովի դիտողությունները ճիշտ են»։ — «Իսկ ի՞նչ են անում այդ սպիտակ գնդիկները, յերբ մարդու մարմնի մեջ բակտերիաներ չկան» — դարձյալ հարցըց Մանիկը։ — «Նրանք միշտ ել աշխատանք ունեն, — պատասխանեց բժիշկը։ — Դու գիտես, վոր լվանալու ժամանակ, մարդու մարմնի յերեսից շատ բջիջներ են հեռացվում։

*.) Տես «Լինինք ուժեղ և առողջ» գրքույկի առաջին մասում № 47 նկարը։

Նույն բանը կատարվում ե մարմի մեջ։ Անընդհատ բջիջները են մեռնում և նորերը ծնվում։ Արյան սպիտակ գնդիկները կլանում են մեր մարմի մեռած մասնիկներին։ առանց նրանց մեր մարմինը ծանրաբեռնված կլիներ մեռած բջիջների դիակներով։

Ի՞նչ պետք ե անել փոքրիկ վերք ստանալու դեպքում։
Ի՞նչպես կվարվես, յերե վերքը մեծ լինի։

ԽԶՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ՊԼԱՍՄԱՑԻ ԴԵՐԸ.

Յեթե մարդ վիրավորված ե, անոթներից դուրս յեկած արյունը արագ խտանում ե, Խտացած արյան կտորը խսկույն փակում ե վերքը և կանգնեցնում արյան հոսանքը։ Խտանում ե արյան հեղուկ մասը շնորհիվ նրա մեջ յեղած առանձին նյութի։ Յեթե անոթից դուրս յեկած արյունը ցուպիկով լավ խառնենք, խտացած արյան թելերը և փաթիլները կնըստեն ցուպիկի վրա։ Յեթե այդ փաթիլները հեռացնենք, արյան մնացած մասը այլևս չի խտանա։ Արյան հեղուկ մասը կոչվում ե պլասմա (արյունահյութ), Այն մասը, վոր խտանում ե, կոչվում ե միքրին (ներդին)։ Արյունահյութը առանց ֆիբրինի կոչվում ե շիջուկ։ Յեթե արյունը հավաքենք վորեւե ամանի մեջ, նա կխտանա։ Բայց խտանալուց միասում ամանակ հետո կսկսի յերկալ հստակ, դեղնագույն մի հեղուկ, վորը և կոչվում ե արյունի շիջուկ։ Հիշեցե՛ք, ինչպես ե մերվում կաթը. նա նույնպես արտադրում ե հստակ շիջուկ։

Շնորհիվ այն հանգամանքի, վոր արյունը հեղուկ ե, նա շարժվում ե մեր ամբողջ մարմի մեջ և տա-

նում ե դեպի բջիջները սննդատու և շինարարական նյութեր։ Այդ նյութերը լուծված են արյունահյութի մեջ։ Առանց սննդի բջիջները կփոխչանան։ Առանց շինարարական նյութի նոր բջիջներ չեն կարող կազմակերպվել։ Իսերին փոխարինելու համար։ Արյունահյութը հավաքում ե նաև այն մնացորդները, վոր կուտակվում են՝ բջիջների սննդատու նյութերը վերամշակելուց հետո։

Լսե՞լ եք դուք այն մասին, վոր յերբ յերեխաները հիվանդանում են դիֆտերիտով, նրանց սրսկում են ինչ վոր շիջուկ։ Ահա թե ինչպես և ինչու համար են ստանում այդ շիջուկը։ Այն բակտերիաները, վոր զանազան վարակիչ հիվանդությունների պատճառ են դառնում, բորբոքում են և թարախում մեր գործարանները։ Դիֆտերիտի ժամանակ բակտերիաները բորբոքում են ըմպանը, բուկը և քիթը։ Բացի դրանից՝ այդ բակտերիաները արտադրում են այնպիսի թույն, վորը թունավորում ե մեր ամբողջ որգանիզմը։ Ահա թե ինչու վարակիչ հիվանդությունների ժամանակ ցավում ե վոչ թե միայն բորբոքված գործարանը, որինակ, բուկը, այլ ամբողջ մարմինը։ Հիվանդը ջերմում ե։ Յեթե այդ թույները չինեյին մարդ ավելի հեշտությամբ կազատվեր վարակիչ հիվանդությունից, վորովհետև արյան սպիտակ գնդիկները կլանում են բակտերիաներին։ Բակտերիաների գեմ պայքարելու համար դուրս ե գալիս արյան շիջուկը, վորի մեջ պատրաստվում են հակաթույներ՝ բակտերիաների արտադրած թույների գեմ։ Այս հակաթույներն են, վոր փրկում են մեղ մահից։

Բայց ամեն մարդ այնքան ուժեղ և առողջ չէ, վոր նրա որդանիզմի մեջ պատրաստվեն հարկավոր քանակությամբ հակաթույներ։ Հակաթույներ ստանալու համար ոգտվում են կենդանիներից։ Վերցնում են դիֆտերիտով հիվանդացած և առողջացած ձիու արյան շիջուկը, վորի մեջ գտնվում են դիֆտերիտի բակտերիաների արտադրած թույների հակաթույները։ Այդ շիջուկը սրակում են դիֆտերիտով հիվանդ մարդու մարմնի մեջ։ Այդ միջոցը կիրառելուց հետո դիֆտերիտի դեմ պայքարելը շատ հեշտացել եւ։

VII. ՍՏԱՄՈՔՍԱ-ԱՂԻՔԱՅԻՆ ՈՒՂԻԻ ԱՌՈՂՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՍՏԱՄՆԵՐԴ.

Դիտեցեք ձեր և ուրիշի ատամները։ Մեկի ատամները սպիտակ են և փայլուն, մյուսինը՝ սև, փշված և շատ ատամներ բոլորովին չկան։ Փչացած ատամներից հաճախ անախորժ հոտ ե գալիս։ Կան մարդիկ, վոր մինչև խորը ծերություն առողջ և պինդ ատամներ ունեն, բայց կան և այնպիսիները, վորոնք վաղ հասակից զրկվում են ատամներից։

Առաջի ատամները կտրտում են բերանը դրած կերակուրը, իսկ հետեւինը՝ աղում, տրորում են նրան։ Առանց ատամների չի կարելի մանրացնել կերակուրը։ Մտիպված՝ մարդ պիտի ուտե միայն ապուր և խաշիլ, իսկ պինդ կերակուրը առանց մանրանալու կդնա ուղիղ ստամոքսը։ Իսկ ստամոքսը անկարող ե այդ կերակուրը մարսել։ Եեվ ահա ատամ չունեցող մարդիկ ստանում են ստամոքսի զանազան հիվանդություններ։ Յեթե մենք կանոնավոր խնամենք, մեր ատամները կարող են պահպանվել շատ յերկար ժամանակ։ Դրա համար հարկավոր ե քնից առաջ ատամները լավ մաքրել խողանակով և ատամի փոշիյով։

Խողանակը պետք ե շարժել վերևից-ներքեւ և վոչ թե
ատամների ամբողջ յերկարությամբ, հակառակ դեպ-
քում ատամների արանքներում կերակրի մնացորդներ
կմնան: Դրանք կսկսեն փտել և կփչացնեն ատամները:
Նույն պատճառով պետք ե ուտելուց հետո բերանը
վողողել գոլ ջրով:

Տաք կերակրից հետո չի կարելի սառը ջուր խմել
և հակառակը: Ատամները պատած են փայլուն, վոս-
կրային նյութով, վոր կոչվում ե եմայլ: Զնայած, վոր
եմայլը շատ պինդ նյութ ե, նա շատ շուտ ե ձեղք-
վում, յեթե տաք կերակրից հետո սառը ջուր խմել
կամ հակառակը: (Այդ յերեսույթը դուք կարող եք
բացատրել, յեթե հիշեք այն փոփոխությունների մա-
սին, վոր կատարվում են մարմինների տաքանալու և
սառչելու ժամանակ), Եմայլի ճեղքվածքների միջով
բակտերիաները հեշտությամբ են մտնում ատամի
մեջ և ավերում նրան: Քաղցրեղեն սիրողները պետք
ե հիշեն, վոր քաղցրեղենից հետո շատ կարեոր ե վո-
ղողել բերանը, վորովհետև քաղցրը ավելի պինդ ե
կպչում ատամներին, քան մի ուրիշ կերակուր:

Քանի՞ ատամ ունես: Մաքրում ես ատամներդ: Յե՞րբ
յես մաքրում, ինից առաջ թե՞ առավոտյան: Վո՞ր ուղղու-
թյամբ ես օարծում խոզանակը:

ԿԵՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԵՎ ՄԻՇԱՆՐԱԲԵՌՆԻՐ ՍՏԱՄՈՒԹՅԴ.

Մեր ընդունած կերակուրը մարսվում ե ստա-
մոքսի և աղիքների մեջ: Նրանք ներսի կողմից պա-
տած են բարակ թաղանթով, վոր նման ե մեր բե-
րանը պատող թաղանթին: Այդ թաղանթում գտնվում

են առանձին գեղձեր, վորոնք պատրաստում են մար-
սողական հյութեր: Այդ հյութերը պինդ, ջրի մեջ
չուծվող կերակրի մասերը դարձնում են լուծվող:
Լուծված կերակուրը ծծվում է մարսողական խողո-
վակի պատերից արյան մեջ և տարածվում է ամբողջ
որդանիղմի մեջ:

Մեր ընդունած կերակուրը գնում ե դեպի ստա-
մոքս: Այնտեղ նա մնում ե մի քանի ժամ: Մարսվե-
լուց հետո կերակուրը անցնում ե դեպի աղիքները:
Յերբ կերակուրը մտնում ե ստամոքսի և աղիքների
մեջ, գեղձերը արտադրում են մարսողական հյութեր: Ամենից լավ ե որական 3—4 անգամ ուտել: Այդ
դեպքում մենք ամեն անգամ չափավոր ենք ուտում
և մարսողական գործարանները հեշտությամբ են մար-
սում: Իսկ յեթե մենք որական միայն մեկ անգամ
ուտենք, ուտելու ժամանակ շատ սովոր կլինենք և
ակամա կծանրաբեռնենք մեր ստամոքսը: Յերբ կե-
րակուրը լցվում ե ստամոքսի մեջ, վերջինս լայնա-
նում է: Նա սեղմում է հարևան գործարանները և
մարդն զգում ե ցավ և ծանրություն, վորովհետև
ստամոքսի մեջ կերակուրը մնում է ավելի, քան պետք
ե մնար: Ավելի լավ ե մարսվում կերակրի այն մասը,
վոր ընկնում ե ստամոքսի պատերի մոտ: Մնացածի
համար ստամոքսային հյութը չի բավականացնի և նա
կանցնի աղիքների մեջ չմարսված: Այդպիսով աղիք-
ները պետք ե կրկնակի աշխատանք տանեն՝ և իրենց
աշխատանքը, և ստամոքսինը: Ուտել պետք ե ամեն
որ, վորոշ ժամանակ: Այդ դեպքում մարսողական
գեղձերի աշխատանքը փոխարինվում է հանգստով,

իսկ հանգստանալուց հետո նրանք ավելի լավ են աշխատում, ավելի ուժեղ մարսողական հյութեր են պատրաստում:

Առավոտյան կերը մեր որդանիզմի համար ամենաառաջակարն եւ: Առավոտյան մենք սկսում ենք աշխատել: Սովորելը նույնպես աշխատանք եւ: Սովորելուց հետո յել մենք հոգնում ենք: Յեթե մենք սոված սկսենք աշխատել, այդ դեպքում մեր որդանիզմի ուժի պաշարից ենք գործադրում, իսկ յեթե ուտելուց հետո յենք սկսում աշխատել, մենք գործադրում ենք այն ուժը, վոր տվել ե մեղ՝ մեր ընդունած կերակուրը: Քնելուց առաջ, ընդհակառակը, ֆասսակար ե շատ ուտել: Գիշերը մեր որդանիզմը հանգստանում ե և, ուրեմն, վատ ե աշխատում ու ընդունած կերակուրը վատ ե մարսվում: Դրանից հետո առավոտյան, բերանումդ զգում ես ինչ վոր վատ համ և ախորժակ չես ունենում: Այդ պատճառով պետք ե ուտել քնելուց յերկու-յերեք ժամ առաջ:

ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐՈՒ ԱՂԻՔՆԵՐԴ ԱՌԱՎՈՑՆԵՐԸ
ԴԱՏԱՐԿԵԼ.

Մեր աղիքների յերկարությունը մարմի յերկարությունից հինգ անգամ ավել եւ: Աղիքները լինում են հաստ ու բարակ: Կերակուրը մարսվում ե բարակ աղիքների մեջ: Բայց նա ամբողջապես չի մարսվում: Կենդանիների միսը և ձուկը մարսվում են համարյա ամբողջապես, իսկ բուսական կերակրի, հացի և բանջարեղենի մեջ կան այնպիսի նյութեր, վոր աղիքները չեն կարող մարսել, որինակ, բուսական բջիջների թաղանթը և կեղևի մացորդը: Զմարսված կե-


րակը մացորդները կուտակվում են հաստ աղիքի մեջ և գրգռում են նրան: Աղիքների պատերի մկանները կծկվում են և դուրս են հրում կերակրի չմարսված մացորդները: Յեթե այդ մացորդները մասն հաստ աղիքի մեջ, նրանք կնեխվեն և կթունավորեն մարդու որդանիզմը: Քանի վոր աղիքները դատարկված չեն, մարդ ծանրություն ե զգում և ախորժակ չի ունենում: Ում աղիքները կանոնավոր են դատարկվում, նա իրեն լավ ե զգում, ախորժակը տեղն ե լինում և զլուխն ել լավ ե աշխատում: Այդ պատճառով ել մարդ պետք ե սովորություն դարձնի աղիքները դատարկել առավոտյան, ուտելուց առաջ: Ինչպես մոխրով լցված վառարանը ավելի վատ ե վառվում, այնպես ել չմարսված կերակրի մացորդներով աղտոտված մեր որդանիզմը ավելի վատ ե մարսվում նոր կերակուրը: Այդ պատճառով շատ ֆասսակար և չդատարկել աղիքները, յերբ կարիք ե զգացվում:

Յերբ մարդու աղիքների մկանները թույլ են, նա «կապություն» ե ունենում: Այդ գեկքում նրան պետք ե ավելի կոշտ կերակուր տալ, որինակ, սկ հաց: Սկ հացի մեջ շատ անմարսելի մասեր կան, վորնք գրգռում են աղիքները և սրանք ավելի լավ են դատարկվում: «Կապություն» ունենում են հաճախ նրանք, ովքեր միմիայն սպիտակ հաց կամ վոչ բարականաչափ կոշտ կերակուր են զործածում:

ՄԱԿԱԲՈՒԹԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ
ՆՐԱՆՑԻՑ.

Յեթե մեկի սիրալ հաճախ խանում ե, յեթե մերթ ախորժակ չունի, մերթ քաղց ե զգում և նա

առանց տեսանելի պատճառի նվազում և, բժիշկը խորհուրդ ե տալիս նրան քննել տալ կղկղանքը և իմանալ՝ արդյոք նրա մեջ փորդի մասնիկներ չկան*): Սոլիտերը կամ փոքր վորդը ընկնում ե մեր աղիքների մեջ լավ չյեփված խողի, յեղան և ձկան մսի հետ: Նրա ձվերն ընկնում են, որինակ, խողի ստամոքսի մեջ: Այստեղ ձվի թաղանթը լուծվում է, և դուրս են գալիս թրթուռներ: Սրանք ստամոքսի միջից ընկնում են աղիքների մեջ և, ծակելով աղիք-




32-րդ նկար: Ֆինկեր, խողի մսի մեջ:

ների պատերը, մի քիչ թափառելուց հետո, մկանների մեջ բնակություն են հաստատում: Այստեղ թրթուռը դառնում ե փամփշտիկ, վորը կոչվում ե ֆինկ: Նա նկատվում է մսի մեջ, նույնիսկ առանց խոշորացույցի: Յեթե մենք ուտում ենք կիսայեփ միս, ֆինկն ընկնում ե մեր աղիքների մեջ և յերեք ամսից հետո նա դառնում ե ժապավենաձև փորի վորդ:

*) Ցես «Լինին» ուժեղ յեվ առողջա դրբույկի առաջին մասում, նկար 19-րդ:

կա ևս մի տեսակ վորդ, վորը կոչվում ե եփինոկը: Սա շատ վտանգավոր ե մարդու կյանքի համար: Սա բնակություն ե հաստատում մարդու թոքերի և յարդի մեջ: Եթինոկոքի ձվերը լինում են շների լեզվի վրա և յերբ մենք թույլ ենք տալիս նրանց լիզել մեր ձեռներն ու յերեսը և դրանից հետո չենք լվացվում, վարակվում ենք: Յերեխաները, գետնի վրա խաղալու ժամանակ, ձեռքերով տանում են դեպի մարսողական խողովակը կոր վորդի ձվերը: Սա թե-



33-րդ նկար: Եփինոկոք:

պետ կյանքին վտանգ չի սպառնում, բայց վչացնում ե առողջությունը:


Վորպեսզի մարդիկ չիվանդանան վորդով վարակված միս ուտելուց, սահմանված ե բժշկական քննություն, վոր կատարվում ե անասունների մսի վրա սպանդանոցում: Ուրեմն այն միսը, վորի վրա

այդ ստուգման կնիքը բացակայում ե, վտանգավոր ե գործածել: Ուտելուց առաջ ձեռքերը պետք ե սապոնով լվանալ և հետևել, վոր ուրիշներն են լվանան, այլապես նրանք կարող են վարակել հացը, վորը հետո դուք վերցնելու և ուտելու յեք:

ԿԱԹԻ ՄԱՍԻՆ.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ կթում ե կաթը դույլի մեջ: Բայց արդյոք նա իր ձեռքերը և դույլը լվացե՞լ եր, չգիտենք: Քաղաքից գալիս ե նրա մոտ կաթ ծախողը, վերցնում նրա կաթը և տանում ծախելու: Պատահում ե, վոր կաթ ծախողը սերը քաշում ե, կամ ջուր ե ավելացնում, կամ մի ուրիշ բան ե ավելացնում, վոր կաթը թանձր յերեա: Բայց սերը կաթի յուղն ե, և նրա ամենասաննդարար մասը: Զլուծված (ջրով չբացած) կաթի մեջ պետք ե չորս տոկոս յուղ լինի: Այդ կաթը ծախվում ե քաղաքում: Մայրը գնում է իր յերեխաների համար և կերակրում նրանց: Բայց այդ կաթից յերեխաները չեն աճում և պնդանում ու առաջիկ նման գունատ են մնում:

Ուստաստանում 100 յերեխաներից 30-ը մեռնում են դեռ 1 տարեկան չեղած: Շվեյցարիայում հարյուրից մեռնում են միայն 10 յերեխա, մինչեւ 5 տարեկան հասակը, Ուստաստանում հարյուրից մեռնում են մոտ 50 յերեխա: Այդպիսի մահացության գլխավոր պատճառն այն ե, վոր մայրերը իրենց յերեխաներին իրենց կըծքի կաթով չեն կերակրում,



34-րդ նկար: Կովի կաթի յերկար ճանապարհը



Մոր կաթի կարճ ճանապարհը

այլ ջրախառն կովի կաթով շնից, կամ շատ շուտ են
սկսում կերակրել հացով և խաշիլով:

Յեթե յերեխային կերակրում են շնից, պետք ե
խիստ հետեւ մաքրությանը, այլապես կաթը կարող
է թթվել և խմող յերեխային մսասել: Շիշը պետք ե
մաքուր պահել, կաթը լավ յեռացնել, այլապես նա
արագ կփչանա բակտերիաների ազդեցության տակ:

Բացի դրանից, պետք ե շեշտել, վոր կովի կաթը
նման չե մոր կաթին: Նա ավելի յուղալի յե, և առա-
ջին ամիսները պետք ե տալ յերեխային վոչ թե զուտ
կաթ, այլ ջրախառն:

Այդ պատճառով մանկան համար շատ ավելի
առողջարար ե, յերբ նրան մայրն ե կերակրում:
Ամեն մի մայր պետք ե իր յերեխային իր կաթով
կերակրի:

ԿԵՐԱԿՐԻ ՄԱՍԻՆ.

Ով իր կերածը լավ ե մարսում, նա առողջ ե և
ուժեղ, իսկ ով վատ ե մարսում, նա թույլ ե և հի-
վանդու: Մարդիկ հեշտությամբ հիվանդանում են
հում ջրից, հում կաթից, կիսայեփ կերակրից, լավ
չթխված հացից, սառը կերակուր ուտելուց, իր ժամա-
նակին չուտելուց, անլվա բանջարեղեն և միրդ ուտե-
լուց, անլվա ձեռքերով հաց ուտելուց, վոչ-թարմ
մթերքներ գործածելուց:

Հում ջրի մեջ հաճախ բակտերիաներ են ընկնում,
վորոնք փորհարինք են առաջ բերում: Խոյերայի և
փորովայնատիֆի համաճարակի ժամանակ առանձ-

նապես զգույշ պետք ե լինել և հում ջուր չխմել,
վորովինետև վարակը տարածվում ե ջրի միջոցով:

Հում կաթը կարող ե պարունակել իր մեջ տու-
բերկուլյողի վարակ և բացի դրանից, հում կաթը շուտ
ե փչանում:

Լավ չյեփված կերակուրը դժվար ե մարսվում
մեր մարսողական գործարանում և այդ պատճառով
առաջ են գալիս մի շարք հիվանդություններ:

Լավ չթխված հացը մսասակար ե, վորովինետև
նա գունդ ե դառնում ստամոքսի մեջ: Այդպիսի հաց
ուտելուց հետո մարդ զգում ե այրուցք և ծանրու-
թյուն «սրտի գդալի» տակ:

Սառը կերակուրը նույնպես մսասակար ե: Տաք
կերակուրը տաքացնում ե մեզ, այնինչ, մենք պետք
ե սառը կերակրին տաքացնենք: Սառը կերակուրը
համեղ չե, իսկ անհամ կերակուրը ավելի դժվար ե
մարսվում, քան այն, վորը մենք ախորժակով ենք
ուտում: Դուք յերկի նկատել եք, վոր յերբ մարդ
մի համեղ բանի ե նայում, նրա թուքը գնում ե,
այդ ժամանակ վոչ թե միայն թուքն ե գնում, այլ և
ստամոքսային հյութն ե արտադրվում:

Ով տաք կերակրի փոխարեն սառը կերակուր ե
ուտում, նրա մարսողական գործարանը անկանոն ե
գործում: Բացի դրանից, որինակ, յերշիկը հաճախ
թարմ չի լինում, վորովինետև մեջը հաճախ մսի մնա-
ցորդներ են գնում, ուստի ավելի լավ ե միայն հա-
ցով կշանակ, քան փչանա հին կերակուր ուտել:

Փչանա մսի և ձկան մեջ գոյանում են թույ-
ներ: Նրանք թունավորում են մարդու որգանիզմը,


վորից նա կարող է հիվանդանալ և անգամ մեռնել:
Չմեռը կերակուրը լավ եւ պահվում, բայց ամբան
շոգին յերբեք չպետք է յերկրորդ որն ուտել: Ամառը
չպետք է շատ միս ուտել, այլ պետք է մնվել մեծ
մասամբ բանջարեղենով, մրգերով և կաթնային մթերք-
ներով: Միրզը պետք է յեռացած ջրով լվանալ, այդ
անելիս, ձեռքերը պետք է մաքուր լվացված լինեն:

Միատեսակ կերակուրը, առհասարակ, ոգտակար
չե, վորովհետև նա ձանձրացնում է և ախորժակ չի
գրգռում: Պետք է կերակուրը բազմազան դարձնել:

Ստամեսի խանգարում ունեցե՞լ ես:

Ի՞նչ ես կերել դրանից առաջ:

Բւտելուց առաջ ձեռքերդ լվանո՞ւմ ես:



Մարդու առջեխցի հերձաբացված բունը: 1—կոկորդ; 2—վահանագեղձ;
3—ծնչափող; 4—աջ և 5—ձախ թոքը (յերկուսն ել հետ են քաշված);
6—սիրուր, վոր շրջապատված և առջեխցի հերձաբացված սրտապարկով;
7—առլուր (մայր զարկերակ); 8 և 9—յերակներ; 10—ստոծանի կամ-
դիաֆրագմ; 11—ստամոքս; 12—լյարդ (հետ և քաշված); 13—մաղձա-
պարկ; 14—փայծաղ; 15—բարակակիներ; 16—կուրաղի; 17, 18 և 19
համրաղիներ; 20—ուղիղաղի; 21—միզապարկ:

VIII. ԱՉՔԻ ՑԵՎ ԱԿԱՆՁԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԻՆՉՈ՞Ի ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԶ ՇԱՏ ԿԱՐՃԱՏԵՍՆԵՐ ԿԱՆ.

Կան մարդիկ, վորոնք ակնոցներ են կրում՝ կարդալու կամ մոտ իրերը դիտելու ժամանակ, բայց հեռուն նրանք լավ են տեսնում: Բայց կան մարդիկ, վորոնք, ընդհակառակը, կարդում են և կարում առանց ակնոցների, իսկ հեռու իրեր դիտելու ժամանակ ակնոցներ են դնում: Առաջիններին կոչում են հեռատես, իսկ վերջիններին՝ կարճատես: Ցեթե լավ նայենք կարճատեսի աչքերին, կտեսնենք, վոր նրա աչքերը ավելի դուրս պրծած են, քան նորմալ տեսողություն ունեցողինը:

Չեր դասարանում շա՞տ հեռատես և կարճատես աշակերտներ կան:

Նկատված ե, վոր լավ տեսողություն ունեցող յերեխան դպրոց մտնելուց մի քանի ժամանակից հետո կարճատես ե դառնում և բարձր դասարաններում կարճատեսների թիմն աստիճանաբար ավելանում ե: Տոկուն աշխատանքի ժամանակ տեսողությունը լարվում ե և հոգնում: Այդ հանգամանքը աչքերը կարճատես ե դարձնում, վորովհետեւ յերկարացնում ե ակնագունդը, և վերջինս դուրս ե պրծնում:

Դրան նպաստում են վաս լուսավորությունը, անհարմար նստարանները, վոր առաջ են բերում մարմինի և դիմի սխալ դրություն՝ գրելու և կարդալու ժամանակ և գրքերի մանր ու վաստ տիպը։ Յեթե լուսավորությունը սխալ է, տետրի վրա ստվերներ են ընկնում։ Այդ ստվերները բացակայում են, յերբ լույսն ընկնում է ձախ կողմից։ (Ստուգեցեք, լույսը ճիշտ է ընկնում ձեր դասարանում)։ Ուստի, և տանը և դասարանում, յերբ նստում եք պարապելու, այնպես նստեցեք, վոր ցերեկը՝ պատուհանը, իսկ յերեկոյան՝ լապտերը լինի ձախ կողմից։ Վորքան լայն և բարձր են պատուհանները, վորքան նեղ և նրանց միջի տարածությունը, այնքան շատ լույս կա դասարանում, այնքան առողջ կլինեն աշակերտները, այնքան լավ կպահպանվի նրանց տեսողությունը։

Դպրոցի պատերը պետք են բաց գույնով ներկված լինեն, Գիրքը կամ տետրը աչքից 32—35 սանտիմետր տարածության վրա պետք են լինեն։ Յեթե այդ տարածության վրա վաս եք տեսնում, դիմեցեք ակնաբուժին։ Նա կնշանակի ձեր աչքերին անհրաժեշտ ակնոցներ, հակառակ դեպքում, առանց ակնոցների, դուք չափազանց կարեք ձեր տեսողությունը և կփչացնեք տեսողության գործարանը։ Տեսողության գործարանը մեր ամենազլիսավոր գործարանն է։ Վաստ տեսողությունը դժվարացնում է մեր աշխատանքը, զրկում է շատ բավականություններից, խանգարում է մեր առողջությանը, չի թույլ տալիս լինել ուրախ և տոկուն աշխատավոր։

ՏՐԱԽՈՄԱՅԻ ՄԱՍԻՆ.

Զեզանից ո՞վ ե քնից զարթնելիս տրոբում կպած աչքերը։ Կպչում են այն աչքերը, վորոնց կոպերի ներքին թաղանթը բորբոքված է։ Կոպերը—դա աչքերի վեղկերն են, վորոնք պահպանում են նրանց քնած ժամանակ, փոշուց և վիրավորվելուց։ Բորբոքված կոպերը թարախ են արտադրում։ Գիշերվա ընթացքում կոպերը կպչում են և չորացած թարախը կուտակվում է աչքի ներսի անկյունում։



35-րդ նկ. Կոպերի բորբոքում։ 36-րդ նկ. Տրախումա։

Աչքերի կոպերի ամենավտանգավոր և ամենավարակիչ բորբոքումը կոչվում է տրախումա։ Նայեք ձեր հարևանի աչքերին։ Դուք կտեսնեք, վոր աչքը կողքերից ծածկված է սպիտակ թաղանթով։ Աչքի մեջտեղը նա դառնում է հստակ։ այս հստակ թաղանթը կոչվում է յեղջրիկ։ Դուք յերեկ նկատած կլինեք վորեւ մեկի աչքի վրա «հատ»։ «Աչքի հատը» դա յեղջրիկի պղտորումն է։ Տրախումայի ժամանակ բորբոքումը կարող է կոպերից անցնել յեղջրիկին և առաջ բերել «աչքի հատ»։

Յեթե այդ հատը ծածկեց ամողջ յեղջրիկը, մարդ կուրանում է: Ոռոսաստանում կույրերի մեծ մասը կուրացել են տրախոմայից: Հայուր կույրերից 21-ը կուրացել են տրախոմայից:

Տրախոման շատ վարակիչ հիվանդություն է: Ոռոսաստանում կան գյուղեր, վորոնց բնակչության մեծ մասը հիվանդ են տրախոմայով: Ահա թե ինչու չի կարելի կեղտոտ ձեռքերով աչքերին ձեռք տալ, որբել աչքերը կեղտոտ յերեսսրբիչով կամ թաշ-




37-րդ նկար: Աչքի հատ:

կինակով: Յերբեք չպետք է գործածել ուրիշի յերեսսրբիչ, վորովհետև նրա վրա կարող է վարակ լինել: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է իր յերեսսրբիչն ունենա:

Յեթե առավոտները աչքերը կպած են լինում, պետք է անմիջապես բժշկին դիմել, քանի դեռ բորբոքումը չի աճել և թարախը չի ավելացել:

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Մարդու արտաքին ականջը կազմված է ականջակունքից և խողովակից: Այդ խողովակը կոչվում է լսողության արտաքին անցք: Ականջակունքը հակառակ ծայրում ծածկված է բարակ թաղանթով, վորը



38-րդ նկ. Ականջի արտաքին խողովակը և թմբկաթաղանթը:

1. Ականջակունք; 2. Լսելիքի անցք; 3. Թմբկաթաղանթ; 4. Մուրճիկ; 5. Սալիկ; 6. Կիսաբոլորակ խողովակիկներ; 7. Ասպանդակ; 8. Լարյուրինթոս; 9. Խխունջ; 10. Լսաներվ; 11. Յեվստախյան փող; 12. Արյունանոթի խողովակ; 13. Միջին ականջի խորշ:

Կոչվում է թմբկաթաղանթ: Յերբ դուք լվանում եք լսողության անցքը և գուրս հանում այնտեղից կուտակված ծծումբը, կատարեցեք այդ մաքուր կտորով,

բայց վոչ յերբեք ասեղով կամ վորեւ այլ սուր բանով, վորպեսզի թմբկաթաղանթը չվիրավորեք:

Թմբկաթաղանթի մյուս կողմը ձգված ե լսողության շատ բարդ գործարանը, վորի հետ պետք ե ծայր աստիճան զգույշ վարվել: Կան մարդիկ, վորոնք յերեխայի ականջին են խփում: Նման հարվածը կարող ե լուրջ հետևանքներ ունենալ և ընդմիշտ փշացնել լսողության գործարանը: Սուր լսողությունը շատ կարևոր ե մարդու համար: Յերբ մարդ վատ ե լսում, նա մի քանի անգամ հարցնում ե խոսակցին և նեղություն պատճառում թե իրեն և թե շրջապատողներին: Պետք ե խոսել առանց ձայնը բարձրացնելու: Խոսակցին պետք ե համոզել վոչ թե բարձրաձայն խոսելով, այլ ասածի իմաստով: Այս բանվորները, վորոնք աշխատում են մեքենաների ուժեղ դրդյունի տակ, վատ են լսում:

Վարակիչ հիվանդությունները հաճախ բարդանում են նրանից, վոր թմբկաթաղանթի մյուս կողմում ընկած մասը բորբոքվում ե: Այդ բորբոքումից թմբկաթաղանթը կարող ե ծակվել և ականջի արտաքին մասից թարախ ե հոսում ու լսողությունը վատանում ե: Այդ պատճառով, յերբ յերեխաները վարակիչ հիվանդությունների ժամանակ գանգատվում են ականջի ցավից, պետք ե անմիջապես դիմել մասնագետ բժշկի, վորպեսզի թմբկաթաղանթի ծակվելու առաջն առնի:

Այս մասին պատմեցե՛ք ձեր մայրերին:

IX. ՀԱՆԳԻՄՏ ՑԵՎ ՔՈՒՆ.

ՀԱՆԳՍՏԻ ՄԱՍԻՆ.

Ֆիղիքական աշխատանքի ժամանակ մկաններն են հոգնում: Մտավոր աշխատանքի ժամանակ մենք հոգնում ենք նրանից, վոր մտածում ենք, ուշագրությամբ լսում ենք, լարված նայում ենք և, բացի դրանից, այդ ժամանակ մենք նույն դրության մեջ յերկար նստած ենք մնում անշարժ: Դասի վերջին մենք արդեն ավելի վատ ենք հասկանում, ավելի շատ սխալներ ենք անում: Մեզ հարկավոր ե հանցիստ:

Մեր աշխատանքը ավելի հաջող ե ընթանում, յերբ մենք հաճախ, բայց կարճ ընդմիջումներ ենք անում:

Ահա թե ինչու դասամիջոցներն անհրաժեշտ են, թեթե մենք մի քանի ժամ անընդհատ աշխատենք, մենք այնպես կհոգնենք, վոր դրանից հետո յերկարատեկ հանգիստն ել չի կարող վերականգնել մեր ուժերը: Մեր մարմի գործարաններից ամենից անխոնջ աշխատողը սիրտն ե: Նա յերբեք կանգ չի առնում: Իսկ ի՞նչպես ե նա աշխատում: Ի՞նչի՞ց ե, վոր չի հոգնում: Միբար բաղկացած ե մկաններից և բա-

ժանվում ե չորս մասերի՝ յերկու վերեի, յերկու ներքեի: Յերբ վերեի բաժինների մկանները կծկվում են, ներքեի բաժինների մկանները թուլացած դրության մեջ են և, ընդհակառակը: Վերեի բաժինների մկանների կծկվելուն գնում է 0,1 վայրկյան: Ապա կծկվում են ներքեի բաժինների մկանները, սրան գնում է 0,3 վայրկյան: Այդ միջոցին հանգստանում են վերեի բաժինների մկանները: Դրանից հետո հանգըստանում ե ամբողջ սիրտը: Այդ հանգստին գնում է 0,4 վայրկյան: Ուրեմն սիրտը հանգստանում է այնքան, փորքան փոր աշխատում ե, և այդ հանգամանքն ե, փոր հնարավորություն ե տալիս նրան այդպես անդուլ աշխատելու:

ԽՍՀՄ-ի որենքները թույլ չեն տալիս 8 ժամից ավելի աշխատել: Մյուս 8 ժամը մարդ պիտի ընծայի ուտելուն, հազնվելուն, կարդալուն, հասարակական աշխատանքին, զվարճություններին, տնային աշխատանքներին և հանգստին: Յերրորդ 8 ժամը պետք ե հատկացնել քնելուն: Զեր հասակի յերեխանները պետք ե քնեն տասը ժամ:

Վերջին պատերազմի ժամանակ, յերկու սպաներ վիճեցին, թե փորի զինվորները շուտ կփորեն նույն յերկարության և նույն խորության խրամատներ: Առաջին սպան բաժանեց իր զինվորներին յերկու մասի և կարգադրեց, փոր յուրաքանչյուր մասը աշխատի մինչև հոգնելը, փորից հետո նրանց պիտի փոխարինեալու խմբակը: Յեզ, փորովհետեւ, սպան իր զինվորներին պարզե եր խոստացել արագ աշխատելու:

Համար, այդ պատճառով, ամեն մասի զինվորները այնքան եյին աշխատում, լորքան ուժ ունեյին: Յերկրորդ սպան բաժանեց իր խումբը յերեք մասի և կարգադրեց: Փոր յուրաքանչյուր խումբը աշխատի միայն հինգ ըոպե: Այդպիսով յուրաքանչյուր խումբը հինգ ըոպե աշխատելուց հետո, տասը ըոպե հանգստանում եր: Յերկրորդ խումբը ավելի շուտ վերջացրեց իր աշխատանքը և չհոգնեց, իսկ առաջին խումբը ուշ վերջացրեց աշխատանքը և սաստիկ հոգնեց: Այս մասի ամեն մի խմբակը աշխատում եր մինչև հոգնելը և հանգստի ըոպեներին չեր կարող հանգստանալ: Սրանից յեզրակացրեք, թե ինչպես պետք ե աշխատել մեծ աշխատանք կատարելու և չհոգնելու համար:

ՔՆԻ ՄԱՍԻՆ.

Դժվար առարկաները դպրոցում սովորաբար լինում են առաջի գասերին և զարմանալի չե: Այդ արվում ե հետեւյալ նկատառումով: Ամենալավ հանգիստը քունն ե, քնելուց հետո ավելի հեշտ ե աշխատել և մտածել: Յեթե մենք լավ չենք քնել, չենք կարող արագ մտածել, վատ ենք հասկանում և աշխատանքը հաջող չի ընթանում: Դպրոցականները պետք ե քնեն տաս ժամ, փորպեսզի ուժեղ և առողջ լինեն.

Յեթե շանը թույլ չեն տալիս քնել, նա 16—17 որից հետո մեռնում ե:

Ֆրանսիացի գիտնականները հետեւյալ փորձն են կատարել. լավ քունն առած շան արյան միջ սրսկել

են այսպիսի շան արյուն, վորին յերկար ժամանակ չեն թողել քնելու. այդ շունը նորից իսկույն քնել են. Սա ապացուցում են, վոր աշխատանքից անասունների արյան մեջ թույներ են կուտակվում: Քնած ժամանակ արյունը քշում ե այդ թույները:

Յերբ մենք քնած չենք, մեր մարմինն աշխատում ե. շարժվելիս մեր մկանները կծկվում են, աչքերը նայում են, ականջները լսում են, ուղեղը մտածում: Քնած ժամանակ բոլոր որգանները հանգստանում են. միայն թոքերն ու սիրտը չեն թուլացնում իրենց աշխատանքը: Իսկ մարմինը իր ուժերը վերականգնում ե հետեւյալ որվա աշխատանքների համար:

X. ԱԼԿՈՀՈԼԻ ՑԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՄԱՍԻՆ.

ԱԼԿՈՀՈԼԻ ՎՆԱՄԻ ՄԱՍԻՆ.

Փողոցի միջով որորվելով մի մարդ ե գնում: Արդյոք հիվանդ չե՞նա: Վո՞չ, նա հարբած ե. Նրա աչքերը լցված են արյունով, նա ինքն իրեն խոսում է, բայց վոչինչ չեք կարող հասկանալ նրա փրնթփրնթոցից, վորովհետև նա ինքն ել չի հասկանում իր խոսածը: Ալկոհոլը թունավորել ե նրա ուղեղը: Ահա նա գիտչում ե ծառին և ընկնում ցեխի մեջ, Լավ ե, յեթե նա տուն գալուց հետո քնում ե, թեպետ և շատ ծանր ե լինում նրա քունը: Բայց նա կարող ե թույլ տալ իրեն զանազան սանձարձակություններ: Նա ծեծում ե կնոջը, յերեխաններին, կոտրտում ամառնեղենը, ջարդում կահ-կարասին:

Շատ մարդիկ չեն հարբում, բայց մշտական խմում են, կարծելով, վոր այդ վտանգավոր չե: Բայց բանից գուրս ե գալիս, վոր ալկոհոլ գործածող մարդիկ ավելի վատ են աշխատում, քան չգործածողները: Որինակ, այն գրաշարը, վորը ալկոհոլ ե գործածում, ավելի շատ սխալներ ե անում, քան այն, վոր ալկոհոլ չի գործածում: Այդպես ե և մյուս բոլոր գործերում:

Պրոֆեսոր Բելստերկը շան լակոտների վրա փորձեր ե կատարել: Մեկին սպիրտ ե տվել, մյուսներին՝ վոչ: Սպիրտ ընդունողը թույլ և հիվանդութ ե յեղել:

Ալկոհոլ գործածողները ավելի հաճախ են հիվանդանում և շուտ մեռնում, քան չգործածողները: Նրանց զավակները հիվանդութ են ծնվում: Յերբ բժիշկը թույլ, դժգույն յերեխա յե տեսնում, իսկույն հարցնում ե, թե արդյոք ծնողները հարբեցող չե՞ն: Իսկ հարբեցողների ամուսնացած աղջիկները կաթ չեն ունենում, վոր իրենց յերեխաներին կերակրեն:

Ալկոհոլը թույն ե: Յերբ մարդ խմում ե, նա շատախոս ե դառնում, բայց դրանից հետո նրա գլուխը կարծես մառախուղի մեջ ե լինում: Նա լավ չի հասկանում, չի հիշում, դժվարությամբ ե աշխատում:

ԾԽԵԼՈՒ ՎՆՍՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Սենյակում կարծես մառախուղ լինի: Գլուխդ պտույտ ե գալիս, շնչառությունդ դժվարանում: Այս-տեղ նստած մարդկանց յերեսները դեղին, շատերը հազում են:

Այդ ի՞նչ բան ե, վո՞րտեղ եք դուք.—ծխախոտի ծխով լցված սենյակում: Լուսամուտները բաց արեք, մեր թոքերին մաքուր ող ե հարկավոր: Մենք ոդափոխում ենք սենյակները, վորպեսզի այնտեղից ածխաթթուն դուրս գա, իսկ ծխողները ավելացնում են նրա քանակը: Ծխախոտի ծուխը վսասակար ե մեր թոքերին, մեր ամբողջ որդանիզմին:

Իսկ վորքան չարիք ե բերում ծխախոտը. «Յերեխաներին հարկավոր ե կաթ տալ,— տառում ե բժիշկը. —

«Փողս չի բավականանում».—«Իսկ վո՞րքան եք դուք ծխախոտի ծխախոտի, գինու»...

Ցեկեք պայքար սկսենք ծխելու դեմ: Դասարանում կախենք մի տախտակ: Մի կողմում գրենք ծխողների աղղանունները, մյուս կողմում՝ չծխողներինը: Ով առաջին խմբակից փոխադրվեց յերկրորդը, մենք կտոնենք նրա գալուստը, պատիվ կտանք նրան: Մենք միշտ կաշխատենք, վոր առաջին խմբակից փոխադրվեն յերկրորդ խմբակ: Մենք այնպես կանենք, վոր վոչ մի աշակերտ, վոչ մի ուսուցիչ և վոչ մի ծառայող չթունավորեն դպրոցի ողը ծխախոտի ծխով:

XI. ՎԵՐՋԱԲԱՆ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԲՁԻԶՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Շատ աշակերտներ կկարդան այս գըքույկը: Բայց խոսքից դեպի գործը—շատ յերկար ճանապարհ է: Վորպեսզի բոլոր աշակերտները սովորեն առողջ կյանք վարել, պետք ե նրանց հրահրել, խրախուսել: Դպրոցական առբջիջը դպրոցական բժշկի դեկավարությամբ, պետք ե մտերիմ հարաբերություններ ստեղծի աշակերտության հետ և այսպիսով ոգնի այդ սովորությունները մտցնելու կյանքի մեջ և արմատացնելու: Միայն այն ժամանակ այս գիրքը իր նպատակին կհասնի, յերբ հին սովորությունները կփոխվեն և յերբ աշակերտությունը այս գըքի խոսքը կդարձնի գործ:

Յուցահանդեսների, բանավոր պրոպագանդի և անձնական որինակի միջոցով, առբջիջը, աշակերտության հետ միասին, պետք ե իրագործեն հետեյալ կանոնները, վորոնք կանխում են հիվանդությունները և առողջացնում կյանքը.

1. Յերեսը, վիզը և ականջները պետք ե լվանալ ամեն որ սառը ջրով և սապոնով: Չեռքերը պետք ե լվանալ ամեն անգամ ուտելուց առաջ: Ատամները

պետք ե մաքրել խոզանակով և ատամի փոշով քնելուց առաջ: Շաբաթը մեկ անգամ պետք ե լվանալ ամբողջ մարմինը գոլ ջրով և սապոնով:

2. Գետում կամ ծովում լողանալիս պետք ե դուրս գալ նախ քան մըսելլ:

3. Զպետք ե թույլ տաս, վոր քեզ համբուրեն, վոչ ել գու ուրիշին համբուրիր: Յերբեք թույլ մի տա, վոր շունը, կատուն լիզեն ձեռներդ և յերեսդ ու նրանց անկողնուդ մեջ մի՛ դնիր:

4. Հատակին թքելն արգելվում ե: Հաղալու և փոշտալու ժամանակ բերանդ ձեռքով ծածկիր:

5. Սպիտակեղենդ, շորերդ և անկողինդ մաքուր պահիր: Մենյակի մեջ չի կարելի շորեր մաքրել. սենյակը պետք ե մաքրել թաց շորով, խոզանակով, վորպեսզի փոշի չբարձրանա:

6. Թարմ ողն ոգտակար ե: Պետք ե ոգանցքը միշտ բաց պահել, ոգափոխել սենյակը որական գոնե յերկու անգամ, առավոտյան և յերեկոյան ու չփաթթվել:

7. Պետք ե ուտել և խմել առանձին ամանից, սրբվել առանձին սրբիչով և քնել առանձին անկողնում:

8. Զուրը և կաթը պետք ե խմել յեփած, խսկ միրզը և բանջարեղենը ուտել լվացած: Ներկված կան ֆետ և արեածաղկի սերմ (սեմիչկա) բնավ չուտել:

9. Ամեն մի առողջ աշակերտ պետք ե զբաղվի մարզանքով և սպորտով, խսկ հանգստի ժամերը անցկացնի բաց ողում, դուրսը:

10. Պետք ե որական 10 ժամ՝ քնել:

11. Յերեխաներին խիստ արգելվում ե ծխել:
Աշակերտը պետք ե յեռանդուն պայքար մղի ծխա-
խոտի թույնի դեմ:

12. Վոգելից խմիչքներ մի՛ գործածիր, յեթե
նույնիսկ չափահասը իր ագիտության պատճառով
առաջարկում ե քեզ:

Ահա առողջապահության 12 պատվիրանները,
վոր աշակերտը պիտի կիրառի կյանքի մեջ, քա-
ռողե իր ընտանիքում, ծանոթների և ընկերական
շրջանում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՄԱՍԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչո՞ւ անհրաժեշտ է լվացվել	3
Ինչպես պահել մազերն ու յեղունգները	4
Ինչպիսի՞ ջրով պետք ե լվացվել	9
Գետի և ծովի մեջ լողանալու մասին	10
Ինչպես պետք ե հաղնվել	11
Մրսելու մասին	13

II. ՖԻԶԿՈՒՏՈՒՐ.

Մարմամարզությունը և սպորտը—առողջության համար անհրաժեշտ գործ և	15
Տաք վերաբերի փոխարեն—ֆիզկուտուր	19

III. ԱՎՃԱՑԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Գեղձախտի մասին	21
--------------------------	----

IV. ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Ի՞նչ և ուսիխտը	24
Ինչո՞ւ յերեխաների վոսկորները շատ ճկուն են, իսկ ծե- րերինը՝ ամսւը են և կոտրվող	26
Յերեխայի անկողինը պետք ե լինի վոչ շատ փափուկ, մինչև վոր նրա վողնաշարը պնդանա	28

Կրծքի ծռված վանդակների մասին	30
Ինչու մարդկանցից մի քանիսը լավ են ման գալիս, իսկ մյուսները՝ վատ	32

V. ՇՆՋԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչու յենք ողափոխում մեր սենյակը	35
Կրծքի վանդակի մասին	37
Ինչպես ուղղել կրծքի վանդակի տափակությունը . . .	39
Թոքախտի մասին, ինչպես խուսափել նրանից	41
Մահացություն՝ տուբերկուլյոզից	44
Ճիշտ ե, վոր թոքախտավորների խուխը վարակիչ ե . .	44
Դիսպանները թոքախտի դեմ ե պայքարում	46
Զբոսապարտեզները և այդիները—բազարի թոքերն են .	51
Ապագան—բացողյա դպրոցներին ե	53

VI. ԱՐՑԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչից ե, վոր յերեխաների մի մասի թշերը գունատ են, իսկ մյուսներինը՝ կարմիր	54
Սպիտակ արյունագնդիկների մասին	56
Ինչումն ե կայանում պլասմայի դերը	58

VII. ՍՏԱՄՈՔՍԱ-ԱԳԻՖԱՅԻՆ ՈՒԳԻՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պահպանեցե՛ք ատամներդ	61
Կե՛ր ժամանակին և մի՛ ծանրաբեռներ ստամոքսդ . .	62
Սովորություն դարձրու աղիքներդ առավոտները դատարկել 64	
Մակաբույժների մասին, և ինչպես պաշտպանվել նրանցից .	65
Կաթի մասին	68
Կերակրի մասին	70

VIII. ԱԶՔԻ ՑԵՎ ԱԿԱՆՁԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչու դպրոցականների մեջ շատ կարճառեներ կան . .	73
Տրախոմայի մասին	75

IX. ՀԱՆԳԻՄ ՑԵՎ ՔՈՒՆ.

Հանգստի մասին	79
Քնի մասին	81

X. ԱԼԿՈԶԲԼԻ ՑԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՄԱՍԻՆ.

Ալկոհոլի վնասի մասին	83
Ծխելու վնասի մասին	84

XI. ՎԵՐՋԱԲՈՆ.

Դպրոցական առքջիջների անիլիքները	86
---	----

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. թ. 10

Լ Ս Խ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

	ԳԻՆԸ
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ. Կազմեց Ն. Կրուպսկայա	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին	50 կ.
ԱԶԴԱՑԻՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին	50 կ.
1905 թ. ՄԵՐ Ի ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԼՅՈՒՆԸ, Ի. ՖԼԵՐՈՎԱԿԻԵ	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. ԵԼԻՎԱՐՈՎ	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՁԵՐՆԵՑԻԱՅՆ, —Թ. ՌԵՎԼԻՆ	20 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺՈՋՅԵԼ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, —Զ. Լավրենտի	30 կ.
ԿԱՄԱՐ. ԵԵՏԿԻՆ (կիսապր.), Զ. Բոյարսկայա	15 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՅԵՐ (Կոմս. հմբ.), ըստ Վերգանակու, պրակ I,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՅԵՐ " " " պրակ II	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՅԵՐ " " " պրակ III	50 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱՇՈՒՄԸ, —Դ. Աղոլ	35 կ.
ԻՆՉՊԵՍ և ԱՌԱՋ. և ԶԱՐԴ. ԿԵՍՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ, Մ. ԳՐԵՄյացկի	50 կ.
ԻՆՉՊԵՍ և ՍԱՐԹՎԱԾ ՏԻԵՅԵԶԵՐՔԸ, Ակադեմիկոս Դ. Գրավե	50 կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՅԵՎԱԿ և ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. ԳՐԵՄյացկի	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՒՆԵՐԸ, —Բ. ՄԵԼԵԿԻՆ	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՎՈՒՆԵԼԻ ԴՇՆԱՄԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՄՆԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԴՈՒ ԲՆԱԿԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, —Վ. Յաղվեցկի	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵՐՈՒՀԱՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՑԿԱՑՆԵՐԸ, —Վ. Դամին-Սիրեբյակ	20 կ.
ՏԳԻՇՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԿԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, —Վ. Դամին-Սիրեբյակ	15 կ.

ԳԵՂ ԿԱՆԳՆԻ-ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (կոռպերացիան պյուղում), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏԽՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻԾՈՒԹՅՈՒՆԸ, —Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՇԽԱՐՄՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄՄԱՆԱԿ, —Պ. Վլասով,	40 կ.
ԳՅՈՒՂԱՏՏԵԽԱԿԱՆ ՀԱՐԿՆ, —Մ. Լիկոնիկյան	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈՂՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՂԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ, —Ա. Սկոմրոխով	17 կ.
ԸՆՏԱՆԻԵՐԻ ԿԵՆԴԱՆՈՒՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՂԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱ ԿՈՎ, —Բ. Սկոմրոխով	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՓԵՑ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԴԱՄ ՄՆԻ.	15 կ.
ԽՈԶԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, —Լիկոնիկյան	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԵՆԱՐԱՆՆ, —Գ. Սպերանսկի	16 կ.
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՂԱՆԴՈՒԹՅՈՒՆՆՆՐԸ, —Բ. Գինոբուրդ	30 կ.
ՔՈՍ, և ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ, —բժ. Նաղեկին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՆՏԵՐԵ, —Վ. Բրոններ	25 կ.
ԹՈՒՐԱԽՏ, —Ն. Սեմաշկո	25 կ.
ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐՑԸ և ԴՐՈՒՑԸ, —Ն. Տյուրյակուլով	40 կ.
ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՀԱՆՁՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՐՈՒՑԻՄ. ԴՐՈՒՑՈՒՄԸ	12 կ.
ԳԵՂՑԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵԽԱՆԵՐԸ	25 կ.
ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ԱՍՏԻճ. ԴՐՈՒՑՈՒՄ, Բ. Ժագորոնկով	65 կ.
ՊԱՏԱՆԻ ԳԻՌԵՐ (Ժողովածու)	60 կ.
ԳԻՌԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈԴԶՈՒԹՅՈՒՆՆ, —Յ. Ռադիկ	10 կ.
ԳԻՌԵՐ, ՀԵՏԵԿԴՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԻՆԻ ԱՌՈԴԶ և ՈՒԺԵՂ, —Ն. Ֆայլիկին, մաս I,	40 կ.
ԼԻՆԻՆԻ ԱՌՈԴԶ և ՈՒԺԵՂ, " " " մաս II,	45 կ.
ՄԵՐ ՎԱՎԱՐ ՅԵՂԲԱՑՐԵՆԵՐԸ-ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆ ԴԱՐՁԱՎ, —Կրաչենկո	35 կ.
ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԸ, —Պ. Խերինեկով	45 կ.
ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ, —Ա. Կուտրին	18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒԶԿԱՆ, —Պ. Ուլովեց	28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԵՐԾՈՂԱՆՈՎ, —Պ. Ուլովեց	22 կ.
ՄՈԽԱԿԻ և ԱՐՁԻ ՄԱՍԻՆ (հերիտ) —Դ. Մամին-Սիբերյակ	15 կ.
ԻՆՉՊ. ԵՑԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻՆԵՐԸ և ԻՆՉ ԱՐԵՑ ԱՐՁԻՆ ԶԻՆՎՈՐԸ	16 կ.

ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ,—Ձր. Յոկս	18 կ.
ԱՆՉՆՎԵՐ ՏՂԱՆ,—Եղմանդո Դամիչիս	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, — Ռւյդա	12 կ.
ԹՈՉՈՒՆՆԵՐ (գունատիպ այլբում յերեխաների համար)	25 կ.
ՅԵՐԻՑԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ, ՄԱՐԴԸ, — Մաքսիմ Գորկի	15 կ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, — Ա. Սերաֆիմովիչ	45 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ. ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
Հ Ա Մ Ա Ր

ՀՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. (բ) ՀԱՄԱՍՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (10 մամուլ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՄՄ (քրիսթոմատիա, 15 մամուլ)

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԳԻՐԸ (10 մամուլ)

ԽՍՀՄ ՅԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐՅԱՆԵՐԸ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ՀԱԼԿՑԵՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՅԻՉԿՈՒԼՑՈՒՐ

ՈԱԴԻՈ

ՅԵՎ. ՈՒՐԻՇ ԳՐՔԵՐ

2013



7296

ԳԻԱԸ 60 ԿՈՊ.



В. Н. Фалькнер.

Будем сильны и здоровы

Част вторая

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва

Никольская, 10.